1995-2005-ի սահմանադրությամբ նախագահը պարտավոր էր կառավարության որոշումները վավերացնել: Այսինքն՝ սա ոչ թե որոշում է, որն ընդունել էր նախագահն իր ցանկությամբ, այլ վավերացրել է կառավարության որոշումը: Եթե այդ գործարքում կան խնդրահարույց կետեր, ապա նախ պետք է խնդիրը կառավարության անդամների հետ լինի:

Կարդացեք՝ էջ 4

Զայնն էլ է փոխվել՝ առաջվա միալար ճղճղոցը չի, խոսում է ելեւէջներով՝ «մինոր»-«մաժոր», «մինոր»-«մաժոր»: Ի՞նչ է պատահել քեզ, մարդ Աստծո, երազիդ գել ու հարամի հո չե՞ս տեսել: Ընտրություն էր՝ եկավ, անցավ, մարդ հո չի՞ մեռել, որ քեզ կորցրել ես: Հաղթողին սազական չէ դա: Եկել ես ԱԺ՝ քեզ հաղթողի պես պահիր:

Կարդացեք՝ էջ 5



Որանք, ովքեր չեն կիսում իշխանության քաղաքական գիծը, չեն կարող ներկայացվել որպես երկրորդական կամ անտեսվել: Ընտրական հաղթանակը չի նշանակում, որ բոլորը համաձայն են իշխանության քաղաքականության հետ: Պետական գործչի ուժը չափվում է ոչ միայն իրեն աջակցողների, այլեւ քննադատողների ձայնը լսելու կարողությամբ:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 99 (4234), 19 հունիս, ուրբաթ, 2026

www.hraparak.am

Իշխանական մեր աղբյուրներից տեղեկացանք, որ Նիկոլ Փաշինյանն իր արեւմտյան հովանավորների միջոցով փորձում է Ալիեւին համոզել, որ հրաժարվի ՀՀ Սահմանադրությունը փոխելու պահանջից՝ դրա դիմաց խոստանալով Ալիեւին այլ՝ դրան համարժեք քայլերի գնալ, դիցուք՝ արմատախիլ անել ռեւանշի գաղափարը երկրից: Հունիսի 7-ի ընտրություններից հետո սահմանադրական մեծամասնությունից զրկված Փաշինյանը փորձում է համոզել, որ այլընտրանքային ճանապարհով սահմանադրական հանրաքվեի հասնելը հեշտ գործընթաց չի լինելու: Օրինակ, կարող է փորձել երկարատեւ կալանքներ սահմանել, ասենք՝ արցախյան պատերազմների հերոսների, Արցախի հարցը քաղաքական կապիտալի վերածած գործիչների նկատմամբ: Եվ ենթադրվում է, որ Ռոբերտ Քոչարյանի, մյուս արցախցիների եւ հերոսների նկատմամբ հետապնդումներն էլ այդ համատեքստում է պետք դիտարկել: Առայժմ բանակցությունները վերջնարդյունք չեն գրանցել, սակայն տեղեկություններ կան, որ Հաջիեւի այցի ընթացքում էլ է դա քննարկվել:



«Ասասնության թեւեր» կուսակցության հիմնադիր Արման Թաթոյանի եւ նրա կուսակցության ֆինանսավորման, նախընտրական ծախսերի մասին տարբեր խոսակցություններ դաշտ նետվեցին, մասնավորապես՝ այն, որ Թաթոյանին ֆինանսավորում են Մոսկվայից, սակայն, մեր տեղեկություններով, Թաթոյանը նախընտրական ծախսերի համար խոշոր վարկ է վերցրել, մոտ 500 հազար դոլարի մասին է խոսքը, որը, փաստորեն, նպատակին չծառայեց: Երեկ մեր լրագրողը կուսակցության անդամ, ցուցակի երկրորդ համար Դավիթ Անանյանին հարցրել է՝ ճի՞շտ է, որ նախընտրական ծախսերի համար Թաթոյանը վարկով կլորիկ գումար է վերցրել, Անանյանը վստահեցրել է, որ տեղյակ չէ այդ մասին:

Շաբաթներ առաջ հրապարակում էինք արել, որ պաշտպանության համակարգում մայիսի 28-ի շքերթին եւ համապետական ընտրություններին ընդառաջ նախատեսում են պարգեւավճարներ բաժանել, սակայն մեր հրապարակումից հետո, ըստ ամենայնի՝ նաեւ հրապարակման պատճառով, այդ գործընթացը կասեցվեց: ՊՆ-ում ի սկզբանե աշխատակազմին ասել էին, թե չեղարկվում է այդ խոստումը: Տեղեկացանք, սակայն, որ ՆԳՆ-ում ընտրություններին ընդառաջ, այնուամենայնիվ, պարգեւատրել են աշխատակիցներին, համենայնդեպս՝ որոշ ստորաբաժանումների ներկայացուցիչներ, ըստ մեր աղբյուրի, «նախընտրական կաշառքի» տեսքով պարգեւավճարներ են ստացել:

Հայացք կողքից

Միանգամայն հասկանալի է հանրային դժգոհությունը ընդդիմադիր թեկնածուներից եւ, մասնավորապես, այս ընտրությունների ֆավորիտ ուժից՝ «Ուժեղ Հայաստանից»: Մարդիկ իրենց տված մեկ հատիկ քվեն այնքան են կարեւորում, որ այդ քվեն ստացած եւ իրենց հույսերը չարդարացրած մարդու հանդեպ չարանում են, սկսում են մեղադրել, մերժել եւ անգամ ատել նրան: Այս բոլոր էմոցիաները հասկանալի են, եւ դա գալիս է նրանից, որ վերընտրված անձը գնալով ավելի անկառավարելի ու անկանխատեսելի է դառնում, եւ հանրությունը մեծ տագնապներ ունի՝ այս իրավիճակի հետ կապված, ու կարծում է, որ մի շատ կարեւոր շանս՝ երկիրը փրկելու, ճիշտ ուղու վրա դնելու, վտանգները մեզնից հեռացնելու, մենք բաց թողեցինք: Նրանց վրդովմունքը հասկանալի է, տագնապը՝ առավել եւս: Բայց իր քվեն ընդդիմությանը տված մարդիկ, որպես կանոն, մտածող, խելացի մարդիկ են, ուստի դեպքերին պետք է նայեն նաեւ հակառակ կողմից: Ինչու չէ՝ նաեւ ընդդիմության տեսանկյունից: Եթե մենք՝ բոլորս, մեկ հատիկ քվե ենք տվել ու մեզ խաբված ենք զգում, պետք է գիտակցենք, թե ինչքան շատ բան են այս գործընթացի մեջ դրել քաղաքական ուժերը եւ, մասնավորապես՝ ընդդիմադիրները, որոնք եւ ռեսուրս են ծախսել, եւ ժամանակ ու առողջություն են վատնել, եւ հայտնվել են վերարտադրվելուց հետո արգելակները բաց թողած իշխանության թիրախում: Ընտրություններից առաջ տոտալ բռնաճնշումներ իրականացրած իշխանությունը, որը հարյուրներով մարդկանց կալանավորեց ու կեղծ մեղադրանքներ առաջադրեց, ընտրությունների արդյունքների հրապարակումից հետո էլ չի հանգստացել: Թվում է՝ հաղթողը պետք է բավարարվեր իր արդյունքով, մեծահոգի գտնվեր հակառակորդների նկատմամբ, բաց թողներ բանտերում գտնվողներին, հատկապես՝ կանանց, բայց նոր հետապնդումների ալիք է սկսվել երկրով մեկ:

Իշխանական թիմում կրկին ծածուկ պայքար է գնում հանրապետության նախագահի պաշտոնի համար: Տեղեկություններ կան, որ գործող նախագահ Վահագն Խաչատուրյանը լուրջ առողջական խնդիրներ ունի, ոմանց կարծիքով՝ մինչեւ վերջնաժամկետ չի կարողանա պաշտոնավարել, եւ դրանով են պայմանավորված այդ բաղձալի ու դեռ չազատված պաշտոնը զբաղեցնելուն ուղղված հավակնությունները: Դա հոյակապ պաշտոն է՝ ոչինչ չանելու, ճոխ աշխատավարձ ստանալու եւ ամբողջ տարին շրջագայելու սեր ունեցողների համար: Խաչատուրյանը նախագահի պաշտոնում ընտրվել է 2022 թ.՝ յոթ տարի ժամկետով: Նրա տեղին, ըստ լուրերի, հավակնում են վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, ինչպես նաեւ՝ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը: Անցած անգամ եւս կար Արայիկ Հարությունյանի թեկնածությունը, սակայն թիմը կտրականապես դեմ է եղել նրան:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ ԵՆ ՊԱՀԱՆՋՈՒՄ

ՀՀ գլխավոր դատախազությունը նախկին գլխավոր դատախազ Գեւորգ Կոստանյանին ՀՀ իրավասու մարմիններին հանձնելու մասին 2025 թ. դեկտեմբերի 17-ին միջնորդություն էր ուղարկել Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազություն: Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը նոյեմբերի 18-ին Ազգային ժողովում լսումների ժամանակ հայտարարել էր, որ դատախազությունը դիմելու է Ռուսաստանին՝ Կոստանյանի եւ Մարտի 1-ի գործով քննչական խմբի նախկին ղեկավար Վահագն Հարությունյանի հանձնման միջնորդությամբ, որպեսզի բերեն Հայաստան եւ դատեն: Ըստ մեղադրանքի՝ Վահագն Հարությունյանը խեղաթյուրել է Զինված ուժերի մասնակցությունը 2008 թվականի մարտի 1-ի իրադարձություններին՝ այդկերպ օժանդակելով «Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Գեւորգ Կոստանյանի կողմից առանձնապես ծանր հանցագործությունը թաքցնելուն եւ պաշտոնեական կեղծիքներ կատարելուն»: Մարտի 1-ի գործով վաղեմության ժամկետն անցել է, դատավարությունն ավարտվել է, սակայն Գլխավոր դատախազությունը շարունակում է հետապնդել նախկին իշխանության ներկայացուցիչներին: Մենք հետաքրքրվեցինք, թե ինչ են պատասխանել ՌԴ դատախազությունից: ՀՀ գլխավոր դատախազությունից մեզ պատասխանեցին, որ «տեղեկություն ունենալու դեպքում կտեղեկացնեն»: Այսինքն՝ որեւէ պատասխան Ռուսաստանից չկա:

ՏՈՒՆ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԻՐԱԽՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ԴԱՏԱՎՈՐԸ ԲԱԶՄԱԹԻՎ ԻՇԽԱՆԱՀԱՃՈ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ Է ԿԱՅԱՑՐԵԼ

Նիկոլ Փաշինյանն արդեն որերորդ անգամ է անդրադառնում «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանի արդարացման դատավճռին՝ փաստացի կասկածի տակ դնելով դատական ակտի շարժառիթները եւ դատավորին կաշառակեր անվանելով: «Ի՞նչ է նշանակում՝ բռնել արդարացնել Գագիկ Ծառուկյանին ընտրակաշառքի գործով, որեւէ մեկն ուզում է ասի, որ որեւէ մեկը Գագիկ Ծառուկյանին ձրի արդարացրե՞լ է: Ես համակարգին եմ մեղադրում՝ կոռումպացված լինելու մեջ»,- կառավարության նիստից հետո հայտարարել է Փաշինյանը, կարծես թե ինքը ոչ թե պետության ղեկավար է, այլ մի շարքային լրագրող կամ քաղաքագետ, որը ենթադրական գնահատականներ է տալիս որեւէ ակտի եւ հնարավորություն չունի պարզելու՝ իսկապե՞ս դատավորը կաշառք է վերցրել այդ գործով եւ փողով վճիռ արձակել:

Գագիկ Ծառուկյանի վերաբերյալ արդարացման վերդիկտը կայացրել է Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Արամ Գրիգորյանը, որը կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վարույթներով մասնագիտացմամբ դատավոր է, երկար տարիներ քննիչ եւ դատախազ է աշխատել, 2021-22 թվականներին եղել է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի խորհրդականը, 2022թ. հուլիսի 30-ին Նիկոլ Փաշինյանի եւ Վահագն Խաչատուրյանի որոշմամբ նշանակվել է հակակոռուպցիոն դատարանի դատավոր:

Այս գործով Ծառուկյանի փաստաբան **Երեմ Սարգսյանը** մեզ հետ զրույցում նշեց, որ դատավոր Արամ Գրիգորյանի կողմից կայացված այս դատավճիռն իրենց համար անսպասելի է եղել. «Այն պահին, երբ արդարացման դատական ակտը կայացվեց, պարոն Ծառուկյանին ասացինք այդ մասին, ինքը զարմացավ, որ նման ակտ կայացվեց: Ինքը զարմացավ, որ նման ակտ կայացվեց՝ ոչ թե որ արդարացվեց, քանի որ մենք գիտեինք, որ միանշանակ իրավական առումով պետք է արդարացում լինի, որովհետեւ որեւէ հանցագործություն չէր կատարել, բայց զարմացավ, որ դատավորը նման որոշում կայացրեց, իսկ դա տեսանելի է, եթե նայեք տեսագրությունները: Պարոն Ծառուկյանը դատական ակտի հրապարակումից քիչ առաջ էլ հարցնում էր, թե ինչ կլինի: Ասում էինք, որ ապացույցները միանշանակ արդարացման են, բայց Արամ Գրիգորյանի պարագայում չենք սպասում, որ նման դատական ակտ կլինի: Արդեն խոսում էինք, որ կբողոքարկենք վերաքննիչ, վճռաբեկ, Եվրոպական դատարան: Մենք այդ ամենի մասին ասել ենք անգամ նիստի ժամանակ»: Հարցին՝ այս վճիռը բողոքարկվել է, թե՝ ոչ, Սարգսյանը նշեց, որ փաստաբանները դեռ նման ծանուցում չեն ստացել:

Հետաքրքրական է, որ նույն դատավորը վերջին տարիներին քննել է եւ շարունակում է քննել Հայաստանի քաղաքական կյանքի ամենաաղմկահարույց գործերը եւ դրանցով իշխանահաճո որոշումներ է կայացնում: Մասնավորապես, Ռոբերտ Քոչարյանի, Յուրի Խաչատուրովի, Սեյրան Օհանյանի եւ Արմեն Գեւորգյանի՝ մարտի 1-ի գործով դատական գործընթացն Արամ Գրիգորյանի վարույթում է: Նրա վարույթում են Սերժ Սարգսյանի վերաբերյալ մի շարք կոռուպցիոն եւ գույքային բնույթի գործեր: Հովիկ Աբրահամյանի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի եւ կոռուպցիոն բնույթի վարույթների շրջանակում գործերը նույնպես Արամ Գրիգորյանի վարույթում են: Արամ Գրիգորյանն է կայացրել Գրիգորի Խաչատուրովի, Արտուր Ավանեսյանի (Կանդազ) նկատմամբ կալանքի որոշումները: Այնպես որ, իշխանությունը նրանից բողոքելու ոչ մի պատճառ չունի:

Հարց է առաջանում. եթե ՀՀ վարչապետը կարծում է, որ դատական համակարգում հնարավոր է «ցանկացած հարց լուծել», ապա այդ գնահատականը վերաբերում է միայն Ծառուկյանի արդարացման դատավճռի՞ն, թե՞ նույն դատավորի կողմից քննված մյուս աղմկահարույց գործերին եւս: Ի վերջո, եթե դատավորի անաչառությունը կասկածի տակ է դրվում մեկ որոշման պատճառով, ապա նույնը կարող է վերաբերել նաեւ նրա կայացրած կամ կայացնելիք մյուս դատական ակտերին: Իսկ եթե նման կասկածների հիմքեր չկան, ապա վարչապետի հայտարարությունը փաստացի ստվեր է գցում ոչ միայն մեկ վճռի, այլեւ ամբողջ դատական համակարգի եւ այդ համակարգում քննված քաղաքական նշանակության բազմաթիվ գործերի վրա: Եվ ամենակարեւորը՝ սա ուղիղ միջամտություն է անկախ համարվող համակարգի՝ դատական համակարգի գործունեությանը եւ արգելված է օրենքներով ու Սահմանադրությամբ:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ՀԻՔՄԵԹ ՀԱՋԻԵՎԻՑ 30 ՏԱՐԻ ԱՌԱՋ ՄԻՍԻՐ ՄԱՐԴԱՆՈՎՆ ԷՐ ԴԻԼԻՋԱՆ ԵԿԵԼ

Հունիսի 14-ին Ադրբեջանի նախագահի օգնական Հիքմեթ Հաջիեւը Դիլիջանում էր, որտեղ աշխատանքային հանդիպում ունեցավ, զբոսնեց Հայաստանի անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի հետ: 1992-1994 թվականների պատերազմից հետո դա Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյայի առաջին այցը չէ Դիլիջան: Առաջինը 1998-2013 թվականներին Ադրբեջանի կրթության նախարար Միսիր Մարդանովն էր: Մարդանովի մասին Վիքիպեդիայում գրված է, որ նա ծնվել է 1946թ. հոկտեմբերի 3-ին, Դիլիջանի Գեարչին գյուղում: 1950-ական թվականներին այդ բնակավայրը վերացել է, բնակչությունը տեղափոխվել է Սալախ գյուղ, որն այժմ Դիլիջան համայնքի Աղավնավանք գյուղն է: 1997 կամ 1998 թվականին Մ. Մարդանովը միջազգային ինչ-որ գիտաժողովի մասնակցելու համար ժամանել է Երեւան եւ ցանկություն է հայտնել՝ տեսնել իր հայրական տունը: Նրան այդ հնարավորությունը տրվել է:

Աղավնավանքի բնակիչները հիշում են, որ Մարդանովը ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների հետ Աղավնավանք է այցելել: Մարդանովի հետ ռուսախոս լրագրող է եղել, որը նկարահանել է գյուղը, դպրոցը, Մարդանովների տունը, որտեղ այդ ժամանակ բնակվում էր Խանլարի շրջանի Միրզիկ գյուղից բռնագաղթած Գրիգոր Գաբրիելյանի ընտանիքը: Նրանք հյուրերի համար լավ սեղան են բացել: Միսիրը գոհունակություն է հայտնել, որ նման հյուրընկալ, բարի մարդիկ են բնակվում իրենց օջախում: Նա բաժակ է բարձրացրել: Իսկ Աղավնավանքի գյուղապետ Գրիգոր Խոջայանին խնդրանքով է դիմել: Մարդանովի հայրը՝ Ջումեյիլ Մարդանովը, որդուն խնդրել է իր տված տոպրակի մեջ իրենց այգուց երկու բուռ հող լցնել, որ հետը բերի: Վերադարձի ճանապարհին Միսիրը կանգնել է նաեւ դպրոցի մոտ: Աղավնավանքում Մարդանովների հայրական տունը հիմա էլ է տարբերվում մյուսներից: Ջումեյիլ Մարդանովը եղել է Սալահի կոլտնտեսության նախագահը: Նրանց տունը կոլխոզի նախագահին հարիր երկհարկանի տուն է եղել՝ ադրբեջանական կապույտ նախշազարդերով:

Գրիգոր Գաբրիելյանի մահից հետո նրա կինը՝ Ալվինան, տունը 8 հազար դոլարով վաճառել է Երեւանի մի բնակչի, վերջինս էլ տարիներ առաջ 22 հազար դոլարով վերավաճառել է մեկ այլ երեւանցու, որը Մարդանովների տունը որպես ամառանոց է օգտագործում: Միսիր Մարդանովը նախարարի պաշտոնից զրկվելուց հետո՝ 2013 թվականից մինչ օրս Ադրբեջանի մաթեմատիկայի եւ մեխանիկայի ինստիտուտի տնօրենն է: Բայց նրա այցը Դիլիջան շատ տարբեր է Հիքմեթ Հաջիեւի այցից: Մարդանովը Հայաստանի իշխանությանը խնդրել է, որ թույլ տան՝ լինի այն տանը, որտեղ ինքը մեծացել է, իսկ Հաջիեւն այսօր գալիս է որպես զավթիչ, որոշող, իր «ենթակա» հայերի ուղեկցությամբ ամբարտավան կերպով քայլում է Բաքվի բանտում տանջվող Ռուբեն Վարդանյանի սիրելի Դիլիջանում:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

«Հայաստանի էլեկտրական ցանցեր»-ից գործառույթ են խլում՝ տալիս մասնավորին

Հունիսի 17-ի նիստում ՀԾԿ հանձնաժողովը որոշում է ընդունել, որը վերաբերում է 6(10) կՎ լարմամբ սպառման համակարգերի եւ բազմաբնակարան շենքերի բաշխման ցանցին միացման գործընթացին: 6(10) կՎ (կիլովոլտ) լարմամբ սպառողները միջին կամ բարձր լարման էլեկտրական ցանցին անմիջականորեն միացված խոշոր բաժանորդներ են: Նրանք էլեկտրաէներգիան ստանում են ոչ թե սովորական 220Վ կամ 380Վ տնային/կոմերցիոն ցանցերից, այլ անմիջապես 6,000 կամ 10,000 վոլտ հզորությամբ մալուխային կամ օդային գծերից: Փոփոխություններով հստակեցվել է նաեւ որոշ տեխնիկական պայմանների տրամադրումը, փոփոխվել են բաշխողի հետ պայմանագրերի օրինակելի ձեւերը, բայց հանձնաժողովի հաղորդագրության գլխավոր հատվածը, հիմնական բովանդակությունը հետեւյալն է. «Գործող կարգավորման համաձայն՝ վերը նշված բաշխման ցանցին միացումն իրականացվում էր «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից՝ համապատասխան պայմանագրերի կնքման միջոցով: Նոր կարգավորման համաձայն՝ բաշխման ցանցին միացումը կիրականացվի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից տրամադրվող տեխնիկական պայմանների հիման վրա՝ դիմող անձի (սպառող, որը դիմում է միացման համար, նոր կառուցվող բազմաբնակարան շենքի կամ կառուցապատվող թաղամասի միացման դեպքում դիմող անձ է հանդիսանում կառուցապատողը) սեփական միջոցներով: Արդյունքում, միացման գործընթացը կդառնա ավելի պարզ եւ ճկուն»:

Էներգետիկ հարցերի փորձագետ **Արմեն Մանվելյանին** խնդրեցինք բացատրել, թե ինչու է, իր կարծիքով, ընդունվել այս որոշումը, եւ ինչ ազատականացման մասին է խոսքը: «Երեւի տեխնիկական մասնագետներն ավելի լավ բացատրեն, բայց, իմ կարծիքով, սա փող աշխատելու նոր ձեւ է: Մոնոպոլիան ուզում են վերցնել ՀԷՑ-ից: Նախկինում միացումներն իրականացնում էր ՀԷՑ-ը՝ իր հաշվին: Հիմա, այս նոր ընդունված որոշմամբ, եթե նոր շենք են կառուցում, միացումները կառուցապատողն է իրականացնում՝ դիմելով այլ ընկերության: Այլ կերպ ասած՝ հիմա ինչ-որ մասնավոր ընկերություններ են գտնելու, չի բացառվում, որ նրանք լինեն իրենց ընկերներից, որոնք եւս կարող են զբաղվել միացումներով»,- ասում է Մանվելյանը:

Եթե հաշվի առնենք, թե որքան նորակառույց շենքեր կան, ապա կարող ենք կանխատեսել, որ հոսանքի միացումն այդ շենքերին շուտով նոր ու ծաղկուն բիզնես է դառնալու: Այս ընկերությունների վրա են դնելու ՀԷՑ-ի գործառույթը՝ անունը դնելով ազատականացում:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ

ԵՐԿՈՒ ԿԱՐԵՎՈՐ, ԲԱՅՑ ՎԱՏ ԲԱՆ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՑԵԼ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԱՄԱՐ

*Հարցազրույց «Միասնության թեւեր» կուսակցության ներկայացուցիչ, ՊԵԿ նախկին նախագահ **Դավիթ Անանյանի** հետ*

- Պարոն Անանյան, հետընտրական ինչպիսի՞ զարգացումներ եք կանխատեսում՝ հաշվի առնելով, որ իշխանամերձ շրջանակներն են նաեւ ընտրությունների արդյունքների չեղարկում կամ առնվազն վերաքվեարկություն պահանջում, ինչպես նաեւ՝ ընդդիմության համար ինչ անելիքներ եք տեսնում այս փուլում:

- Զարգացումները կանխատեսելու համար պետք է մի քանի բան համադրել. պետք է տեսնել՝ Ադրբեջանն ինչ ակնկալիքներ ուներ, ստացվե՞լ է, թե՞ ոչ, եւ ինչ հանձնարարություն ուներ, ու այդ հանձնարարություններն այսօրվա քաղաքական ռասկլադը թո՞ւյլ է տալու Փաշինյանին՝ իրականացնել: Այս համատեքստում երկու կարեւոր, բայց վատ բան է տեղի ունեցել Նիկոլ Փաշինյանի համար. չունի սահմանադրական մեծամասնություն եւ երկրորդ՝ ունի ոչ լեգիտիմ իշխանության խարան, որը դաջել է իր վրա, ժամանակին ինքը չէր էլ կարող պատկերացնել, որ իր հետ նման բան կարող է ստացվել: Սրան զուգահեռ՝ արտահերթ ռեժիմով նիստ է հրավիրել, որ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ անի, իրենք քանի որ այսօր սահմանադրական մեծամասնություն ունեն, որոշել են հիմա անել: Եթե այս ամենին գումարում ենք փաստը, որ Դանիել Իոաննիսյանը, Արման Բաբաջանյանը եւս խոսում են արդյունքները չեղարկելու մասին, մենք հետեւություն ենք անում, որ կարծես թե իշխանությունը մտադիր է գնալ արդյունքները չեղարկելու եւ նոր ընտրություններ անցկացնելու ճանապարհով: Դրա համար էլ ինքը ռեպրեսիաներն է ուժեղացնում, որպեսզի ռադիկալ ընդդիմության հարցերը լուծի, կեսին կկալանավորի, կեսին կսահմանափակի, կարգելի քաղաքականությամբ զբաղվել ու կգնա այդ ընտրություններին:

- Դուք կարծես թե չեք մտնում ռադիկալ ընդդիմության շարքերը, ձեր նկատմամբ լոյալություն կա:

- Դե, ռադիկալ չենք եղել, դրա համար երեւի չենք մտնում:

- Շարունակելով հարցս. եթե Փաշինյանը Ձեր նշած ճանապարհով գնա, կմասնակցե՞ք այդ ընտրություններին:

- Եթե մեզ հաջողվի համընդհանուր կոնսոլիդացիա անել, ապա՝ այո, առանձին գնալու իմաստ չկա, որովհետեւ այս դեպքում շատ ավելի վատ կլինեն շանսերը:

**- Իսկ ո՞վ կամ ի՞նչը խանգարեց, որ հունիսի 7-ին միայնակ գնացիք, այն դեպքում, երբ ձեզ հստակ առաջարկ է եղել՝ միասին գնալու, սկզբում համաձայնել եք, բանակցել եք, հետո՝ մերժել: Դա է պատճառը, որ ոմանք ասում են՝ ձեր փոխարեն այլ տեղում են որոշումները կայացվել: Բացի այդ, կարծես ձեր շուրջն էլ էիք ուզում համախմբում իրականացնել, բայց դա էլ չեղավ: Եվ դուք, հաշվի չառնելով որեւէ հանգամանք, օրինակ՝ սոցհարցումների արդյունքները եւ այլն, միայնակ գնացիք, եւ ստացվեց այնպես, որ ձեր փոքրաքվեարկության արդյունքում պատկերն ինչպիսին կլինի: Ընտրողը գիտի, թե ինչպես կքվեարկի վերաքվեարկության ժամանակ: Վահագն Հովակիմյանի խնդիրը, որպես ԿԸՀ նախագահի, ընտրական գործընթացների ապահովումն է: Նա ընդամենը քվեարկությունը կազմակերպողն է, մնացածը որոշում է ընտրողը: Վահագն Հովակիմյանի տրամաբանությամբ՝ ընդհանրապես պետք է ընտրություններ չանցկացվեն, որովհետեւ սոցիոլոգիական հարցումները նախապես կարող են վկայել, որ ՔՊ-ն չի կազմելու մեծամասնություն, այդ պատճառով ընտրություններ չպետք է տեղի ունենան, որպեսզի քաղաքացիները չգնան եւ իրենց քվեն չտան ընդդիմադիր ուժերին: Վահագն Հովակիմյանը ոչ մի հիմնավորում չունի այն կոպտագույն սխալների համար, որոնք իրենք թույլ են տվել: Դիտորդական կազմակերպությունները, քաղաքական ուժերը արձանագրել են այն բոլոր խախտումները, որոնք թույլ է տվել Վահագն Հովակիմյանի ղեկավարած կառույցը: Վահագն Հովակիմյանը 60 հազար ընտրողի ձայն փոշիացրեց, որ Նիկոլը 3 մանդատ ավել ունենա: Ընդ որում՝ դա արեց հակառակ տրամաբանությամբ: ԲՀԿ-ն ի սկզբանե եղել է ռադիկալ ընդդիմադիր քաղաքական ուժ, եւ հիմա ստացվում է, որ այդ ռադիկալ ընդդիմադիր ուժին ձայն տված քաղաքացիների քվեներով մանդատ են ստանում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թեկնածուները: Ի դեպ, ինքը եւս այդ կուսակցության անդամ է եղել եւ շարունակում է լինել, ինչը եւս ապօրինություն է: Դե իհարկե, ինչ կարող էր նա անել, ի վերջո՝ Նիկոլ Փաշինյանի շնորհիվ դարձել էր պատգամավոր, ամբողջ կյանքում եղել է Նիկոլ Փաշինյանի օգնականը, ուրիշ ինչ կարելի է սպասել այդ ուժից: Օրենքում չկա որեւէ կետ, որը թույլ է տալիս ԿԸՀ-ին՝ անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները եւ վերաքվեարկություն չնշանակել: Օրենքում հստակ նշված է, որ նման պարագայում ԿԸՀ-ն պարտավոր է կազմակերպել կրկնակի քվեարկություն, բացի դա՝ ԲՀԿ-ն հիմա ինչ ունեցանք ընտրություններից հետո՝ դուք չանցաք խորհրդարան, ձեզ հիմա մեղադրում են, որ փոշիացրիք մեծ թվով ձայներ, ու դրա շնորհիվ իշխանությանը երկու ավել մանդատ հասավ:

- Դուք սխալ եք մեկնաբանում, բայց դա ձեր իրավունքն է:

- Դա իմ մեկնաբանությունը չէ, ես մարդկանց կարծիքն եմ փոխանցում, ձեզ մեղադրում են:

- Դե, մեղադրում են՝ թող մեղադրեն, ինչ եք ուզում, որ ես ասեմ, մեղադրում են՝ լավ են անում, իրենք իրենց կարծիքն ունեն, մենք՝ մեր: Նայեք՝ երբ գնում ես համախմբման, դա ենթադրում է, որ տարբեր տեսակետներ, աշխարհաքաղաքական ընկալումներ, տարբեր հայեցակարգ ունեցողները համախմբվում են մեկ կամ մի քանի գաղափարի շուրջ, իսկ երբ միանում ես, միանում ես ամբողջ իրենց գաղափարախոսությանը: Հետեւաբար, մենք միացում չէինք ակնկալում, ակնկալում էինք համախմբում:

- Բայց ասում են՝ սկզբում համաձայնել եք, հետո տեղեկացրել, որ փոշմանել եք, ու կա կարծիք, որ ձեր փոխարեն այլ կենտրոններում որոշում կայացրել:

- Ո՞վ է ասում, սուտ են ասում, չկա նման բան, այդ տեղեկությունները սուտ են:

- Իսկ կարո՞ղ էիք գոնե ձեր շուրջը բեւեռ ձեւավորել՝ Հայկ Մարությանի, ՀԱԿ-ի հետ էիք կոնտակտի մեջ, «Հայաքվեի»:

- ՀԱԿ-ի հետ չի եղել որեւէ բանակցություն, Լեւոն Զուրաբյանի հետ մեկ անգամ ես եմ հանդիպել, մեկ անգամ՝ պարոն Թաթոյանը, մենք ասել ենք՝ դուք գնացեք ձեր ճանապարհով, մենք գնում ենք մեր ճանապարհով, համախմբման մասին երբեք խոսք չի գնացել, Մարությանին առաջարկվել է հանդիպել, խոսել, մեկ էլ իմացանք, որ ինքն առանձին գնալու մտադրություն ունի: Այդպիսի բաներ, այո, եղել են, բայց բանակցություններ չեն եղել, մարդիկ որոշել են, որ միայնակ են գնում, ու ոչ մեկին չես կարող մեղադրել, արդյունքում Մարության Հայկը, էլի այլ ուժեր, այո, մեր էլեկտորատից տարել են, մեր էլեկտորատը չի եկել քվեարկության, մեզնից ձայն են գողացել, ու այս ամենի արդյունքում տեղի է ունեցել այն, ինչ տեղի է ունեցել, որին որ դուք փոշիացում եք անվանում, եւ ես դրան համաձայն չեմ:

- Վերադառնալով Ձեր այն մտքին, որ եթե Փաշինյանը նոր ընտրություն անի, դուք կմասնակցեք, այսինքն՝ ճի՞շտ հասկացա, որ եթե այսօրվա ռադիկալ ընդդիմությանը զրկի ընտրություններին մասնակցելու հնարավորությունից, դուք կմասնակցեք այդպիսի ընտրության:

- Ոչ, ես այդպիսի բան չասացի, ես ասացի, որ մասնակցության իմաստ կլինի այն դեպքում, եթե լինի համընդհանուր համախմբում: Եթե լինի, այո, իմաստ կունենա, եթե առանձին պետք է գնանք, իմաստ չկա լեգիտիմացնել ավելի վատ ընտրությունները:

- Տեսականորեն կարող եք այլ ուժերի հետ Ձեր ասած համընդհանուր համախմբում ձեւավորել, բայց երկու ընդդիմադիր ռադիկալ ուժեր չմասնակցեն:

- Դե հիմա, մենք հույս ունենք, որ այդպիսի բան տեղի չի ունենա, եթե այդ ուժերը չմասնակցեն, իրենց էլեկտորատը կմնա, չէ՞, դա նշանակում է, որ համընդհանուր համախմբում կարող է լինել: Եվ հետո՝ Դուք նշում եք ռադիկալ ուժեր, բայց դրանցից մեկը ռադիկալ չէ:

- Միայն Քոչարյանի՞ն եք ռադիկալ համարում:

- Բնականաբար, Ռոբերտ Քոչարյանի ուժը շատ ավելի ռադիկալ տրամադրված ուժ է, քան, ասենք, «Ուժեղ Հայաստանը»: Բայց ես պիտի խնդրեմ դադարեցնենք հարցազրույցը...

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՕԳՆԱԿԱՆՆ ՈՒՐԻՇ Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՐ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Վահագն Հովակիմյանը լրատվամիջոցներից մեկին տված հարցազրույցում անդրադարձել է առաջիկա ընտրություններին վերաբերող մի շարք հարցերի՝ կուսակցությունների ֆինանսավորումից մինչեւ քարոզչություն, եւ հատկապես խոսել է ԲՀԿ-ին խորհրդարան չթողնելու ԿԸՀ-ի գործողությունների մասին՝ դա որակելով որպես օրինական քայլ: Վահագն Հովակիմյանը կարծում է, որ խախտումներ արձանագրելու դեպքում իրենք ողջամիտ քայլ են արել այդ ընտրատեղամասերում ընտրությունների արդյունքները անվավեր ճանաչելով եւ ճիշտ են արել, որ վերաքվեարկություն չեն նշանակել՝ այդ մարդկանց զրկելով ընտրելու իրավունքից եւ 60 հազարին մոտ ձայն գողանալով ԲՀԿ-ից, 2 հազար 600 մարդու զրկելով ընտրելու իրավունքից ու 3 մանդատ նվիրելով ՔՊ-ին: «Ուժեղ Հայաստան» կուսակցության պատգամավորի թեկնածու Էդգար Ղազարյանը, «Հրապարակի» հետ զրույցում խոսելով Հովակիմյանի հայտարարությունների մասին, ասում է. «Բայց նախ պետք է հարցնել այդ մարդուն՝ քո ի՞նչ գործն է, թե վերաքվեարկության արդյունքում պատկերն ինչպիսին կլինի: Ընտրողը գիտի, թե ինչպես կքվեարկի վերաքվեարկության ժամանակ: Վահագն Հովակիմյանի խնդիրը, որպես ԿԸՀ նախագահի, ընտրական գործընթացների ապահովումն է: Նա ընդամենը քվեարկությունը կազմակերպողն է, մնացածը որոշում է ընտրողը: Վահագն Հովակիմյանի տրամաբանությամբ՝ ընդհանրապես պետք է ընտրություններ չանցկացվեն, որովհետեւ սոցիոլոգիական հարցումները նախապես կարող են վկայել, որ ՔՊ-ն չի կազմելու մեծամասնություն, այդ պատճառով ընտրություններ չպետք է տեղի ունենան, որպեսզի քաղաքացիները չգնան եւ իրենց քվեն չտան ընդդիմադիր ուժերին: Վահագն Հովակիմյանը ոչ մի հիմնավորում չունի այն կոպտագույն սխալների համար, որոնք իրենք թույլ են տվել: Դիտորդական կազմակերպությունները, քաղաքական ուժերը արձանագրել են այն բոլոր խախտումները, որոնք թույլ է տվել Վահագն Հովակիմյանի ղեկավարած կառույցը: Վահագն Հովակիմյանը 60 հազար ընտրողի ձայն փոշիացրեց, որ Նիկոլը 3 մանդատ ավել ունենա: Ընդ որում՝ դա արեց հակառակ տրամաբանությամբ: ԲՀԿ-ն ի սկզբանե եղել է ռադիկալ ընդդիմադիր քաղաքական ուժ, եւ հիմա ստացվում է, որ այդ ռադիկալ ընդդիմադիր ուժին ձայն տված քաղաքացիների քվեներով մանդատ են ստանում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թեկնածուները: Ի դեպ, ինքը եւս այդ կուսակցության անդամ է եղել եւ շարունակում է լինել, ինչը եւս ապօրինություն է: Դե իհարկե, ինչ կարող էր նա անել, ի վերջո՝ Նիկոլ Փաշինյանի շնորհիվ դարձել էր պատգամավոր, ամբողջ կյանքում եղել է Նիկոլ Փաշինյանի օգնականը, ուրիշ ինչ կարելի է սպասել այդ ուժից: Օրենքում չկա որեւէ կետ, որը թույլ է տալիս ԿԸՀ-ին՝ անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները եւ վերաքվեարկություն չնշանակել: Օրենքում հստակ նշված է, որ նման պարագայում ԿԸՀ-ն պարտավոր է կազմակերպել կրկնակի քվեարկություն, բացի դա՝ ԲՀԿ-ն դիմել էր վարչական դատարան, իսկ դատարանն արձանագրել էր, որ տվյալ երեք տեղամասերում քվեարկությունն ազդել է ընտրությունների վերջնական արդյունքի վրա, իսկ վերաքվեարկության լիազորությունը պատկանում է ԿԸՀ-ին: Ըստ էության՝ վարչական դատարանը եւս պարտավորեցրել է ԿԸՀ-ին՝ կազմակերպել վերաքվեարկություն, սակայն ԿԸՀ-ն այստեղ եւս ենթադրյալ հանցանք է գործել՝ դատարանի որոշումը չկատարելով»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՐԱՎՈՒՆՔ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՐՑԵՐ ՉՏԱԼ, ՄԻԱՆԳԱՄԻՑ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՄԵՂԱԴՐԱՆՔ ԱՌԱՋԱԴՐԵԼ՝ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ՊՐՈՑԵՍ Է

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը չորեքշաբթի օրը թույլ տվեց, որ Գլխավոր դատախազությունը մեղադրանք առաջադրի երկրորդ նախագահ, «Հայաստան» դաշինքի առաջնորդ Ռոբերտ Քոչարյանին: Փաստաբան Արամ Օրբելյանը հայտնեց՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու հոդվածով: Փաստաբանը նիստից առաջ գործից որոշ մանրամասներ փոխանցեց: Մեղադրանքը վերաբերում է 2004 թվականին, այսինքն՝ Քոչարյանի նախագահության ընթացքում կառավարության մի որոշմանն ու դրան հաջորդած գործարքներին: «Այս գործընթացում որեւէ կրիմինալ չկա»,- վստահեցրեց փաստաբանը:

Նիկոլ Փաշինյանը թե՛ ընտրություններից առաջ եւ թե՛ դրա արդյունքների հրապարակումից հետո՝ մի քանի անգամ սպառնացել է, որ ընդդիմադիր երեք առաջնորդները դատապարտվելու են տասը տարվա ազատազրկման: Տպավորություն է, որ Փաշինյանը տառապում է անձի երկվությամբ. մի օր խոստանում է դատել ընդդիմադիրներին, անգամ դատապարտման ժամկետ է նշում, հաջորդ օրը բրիֆինգի ժամանակ զարմացած լրագրողներին հայտարարում է. «Ես ինչ կապ ունեմ դատախազության, իրավապահների հետ, որ ինձ նրանց վերաբերող հարցեր եք տալիս», եւ ասում է՝«ջախջախել» բառն էլ օրենսդրության շրջանակներում է պետք հասկանալ: Թեպետ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը դիմել է ԿԸՀ՝ Ռոբերտ Քոչարյանին անձեռնմխելիությունից զրկելու համար, սակայն իրավապահները, հավանաբար, ամաչում են առաջադրված մեղադրանքից մանրամասներ հայտնել: Գործն այնքան կեղծ է, այնքան անտրամաբանական, որ, երեւի, դատախազությունն էլ է գիտակցում, որ Քոչարյանին նման մեղադրանքով պատժելը զավեշտալի է: Պարզվում է՝ դատախազությունը պաշտոնեական դիրքի չարաշահում է համարում այն, որ 2004 թվականին կառավարությունն ինչ-որ տարածքներում շինթույլտվություն տալու որոշում է կայացրել, իսկ նախագահը կատարել է լիազորությունները եւ իր ստորագրությամբ հաստատել կառավարության որոշումը: Թեմայի մասին «Հրապարակը» զրուցել է փաստաբան **Ալեքսանդր Կոչուբաեւի** հետ:

- 2004 թվականին ինչ-որ տարածքում շինթույլտվության մասին կառավարության որոշման տակ ստորագրելու համար ԿԸՀ-ն Ռ. Քոչարյանին զրկեց անձեռնմխելիությունից, եւ պատրաստվում են հերթական շոուն բեմադրել: Ակնհայտ է, որ այս գործն ունի քաղաքական ենթատեքստ, եւ ընդամենը Նիկոլ Փաշինյանի հերթական ցանկությունն են իրավապահներն ի կատար ածում: Ռոբերտ Քոչարյանը նման տարբեր փաստաթղթերի տակ կարող է ստորագրած լինել: Ձեր գնահատմամբ՝ ինչ գործ է սա:

- Գործի մանրամասներին չեմ տիրապետում: Միայն այն տեղեկությունները, որոնք տարածվել են մեդիայում, բավարար են հասկանալու համար, որ գործ ունենք քաղաքական գործընթացները վիժեցնելու փորձի տրամաբանության հետ: Ես դժվարանում եմ այստեղ իրավական գործընթաց տեսնել, այն պարզ պատճառով, քանի որ այստեղ չկա իրավունքի տարր: Պետք է հասկանալ, որ 2004 թվականին Հայաստանի Հանրապետությունը նախագահական ֆորմատով էր աշխատում, իսկ այդ ստորագրությունը եղել է պաշտոնից բխած ստորագրություն: Եթե նայենք 1995-2005-ի սահմանադրությունները, նախագահն այդ շրջանում պարտավոր էր կառավարության որոշումները վերավավերացնել: Այսինքն՝ սա ոչ թե որոշում է, որն ընդունել էր նախագահն իր ցանկությամբ, այլ նա պարզապես վավերացրել է կառավարության կողմից կայացրած որոշումը: Եթե այդ գործարքում իսկապես լինեին խնդրահարույց կետեր, ապա նախ պետք է խնդիրը կառավարության այն ժամանակվա անդամների հետ լիներ, կառավարությունն այդ որոշումը, ինչպես նաեւ այլ որոշումներ, կայացրել է կոլեգիալ: Չգնալ, կառավարությանը հարցեր չտալ եւ միանգամից նախագահին մեղադրանք առաջադրել, զրկել անձեռնմխելիությունից՝ իրավաբանական տրամաբանությունից դուրս պրոցես է:

- Ստացվում է, որ այդ տրամաբանությամբ Քոչարյանի դեմ բազմաթիվ մեղադրանքներ կարող են առաջադրել եւ նրան մեղադրել 10 տարում հաստատած ցանկացած որոշման համար:

- Նախագահական հանրապետության պարագայում կառավարությունը գործառութային անկախություն չունի: Այն ամբողջությամբ եղել է նախագահի վերահսկողության տակ, ուստի որեւէ որոշում դե յուրե չէր կարող իրավական ուժի մեջ մտնել, քանի դեռ ՀՀ նախագահը դրա տակ ստորագրած չլիներ: Այդ շրջանում անհնար է գտնել կառավարության գեթ մեկ որոշում, որը նախագահի կողմից վավերացված չլիներ: Սա սահմանադրությամբ ամրագրված պրոցես է եղել: Առնվազն մինչեւ 2005-ի նոյեմբերի 20-ը, երբ դադարեց կրկնավավերացման ինստիտուտի գոյությունը, նախքան այդ պահը՝ 1998-ից մինչեւ 2005 թվականները, կառավարության բոլոր որոշումները ենթարկվել են կրկնավավերացման:

- Իշխանությունները՝ Փաշինյանի գլխավորությամբ, Ռոբերտ Քոչարյանին արդեն ութ տարի է՝ մեղադրում են 2008-ի մարտի 1-ի ողբերգական դեպքերի եւ 1999-ի հոկտեմբերի 27-ի ոճրագործության մեջ, իսկ այսօր երկրորդ նախագահին մեղադրում են ընդամենը ինչ-որ տարածքներում շինարարության համար, փաստացի ստացվում է, որ այդ մեղադրանքներն այնքան անհիմն են, որ մի պարզունակ գործից են կառչել.... կարո՞ղ ենք վերջնականապես ասել, որ Նիկոլ Փաշինյանն ու իր պատգամավորները շարքային զրպարտիչներ են՝ ոչ ավելի:

- Եթե Ռոբերտ Քոչարյանը մարտի 1-ի հետ կապ ունենար կամ առհասարակ որեւէ քրեական հանցագործություն կատարած լիներ, ապա ութ տարին ահռելի ժամանակահատված է, որ մենք ունենայինք այդ փաստերն ազդարարող դատավճիռներ: Չկան դատավճիռներ, կան քաղաքական բնույթի հայտարարություններ, վարկածներ, կասկածներ, սակայն, որպես իրողություն, չկա ոչ մի բան: Ի դեպ, անընդունելի է նաեւ այն թեզը, որ դատաիրավական համակարգի պատճառով է նման իրավիճակ ստեղծվել, որովհետեւ Քոչարյանին մեղսագրվող հոդվածն ամբողջապես հակասահմանադրական է ճանաչվել նոր եւ, ինչպես իշխանությունն է ասում, բարեփոխված կազմի ժամանակ: ՍԴ-ն ձեւավորել է հենց այս իշխանությունը, դատաիրավական համակարգին մեղադրելը նույնպես տրամաբանությունից դուրս է: Այնպես որ, բոլոր այս գործընթացները քաղաքական իրադարձությունները վիժեցնելու համար են, իրավական վերլուծության մասին այս պարագայում խոսելն անիմաստ է: Ի դեպ, Սահմանադրությունը բոլոր նախագահների համար ունի հատուկ կետ, ըստ որի՝ նախագահներին չի կարելի զրկել անձեռնմխելիությունից: Բայց մեր երկրում սահմանադրաիրավական պատվիրաններն արհամարհված են:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՆՉ ԵՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵԼ ՓԱՇԻՆՅԱՆՆ ՈՒ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Նիկոլ Փաշինյանը ԿԸՀ է ներկայացրել իր գույքի եւ եկամուտների տարեկան հայտարարագիրը: Որպես անշարժ գույք՝ նա հայտարարագրել է Իջեւանում գտնվող բնակարանը, որտեղ համասեփականատեր է: Այլ անշարժ գույք, ինչպես նաեւ տրանսպորտային միջոց, չի հայտարարագրել: Վերջին տարվա ընթացքում Փաշինյանի եկամուտները կազմել են 31 մլն 882 հազար 198 դրամ, որը ստացել է որպես աշխատավարձ, 4 մլն 768 հազար 480 դրամ ստացել է եկամտահարկի հետվերադարձից, ՔՊ-ից, որպես ռոյալիթի, ստացել է 500 հազար դրամ եւ 500 հազար դոլար (մոտ 185 մլն դրամ) ստացել է «Զայեդ» մարդկային եղբայրության մրցանակի հանձնաժողովից: Այսպիսով Փաշինյանի տարեկան ընդհանուր եկամուտը կազմել է շուրջ 222 մլն դրամ: Հայտարարագիրը ներկայացնելու օրվա դրությամբ Փաշինյանը բանկային հաշվին ունեցել է 4 մլն 18 հազար 75 դրամ, կանխիկ 700 հազար դրամ եւ 800 դոլար:

Հատկանշական է, որ Նիկոլ Փաշինյանի հայտարարագրում ընտանեկան կարգավիճակը նշվել է «ամուսնացած», թեեւ Աննա Հակոբյանի հետ պաշտոնական գրանցված ամուսնություն չունի: Այնուամենայնիվ, Աննա Հակոբյանը նույնպես եկամուտների հայտարարագիր է ներկայացրել: Այս ընտանիքում՝ երբ իրենց պետք է, ամուսիններ են, երբ պետք չէ՝ իրար հետ կապ չունեն:

Աննա Հակոբյանի՝ ԿԿՀ ներկայացրած հայտարարագրում, որպես անշարժ գույք, հայտարարագրված է Երեւանում գտնվող բնակարանի 4/9 բաժնեմասը, որը ժառանգություն է ստացել 2006-ին, 3 ավտոմեքենա, որոնք ձեռք է բերել 2009-2010թթ.: Նա 2009-ից բաժնետոմսեր ունի մի ընկերությունում, որի տվյալները չեն նշվում: Հակոբյանը տարեսկզբին ունեցել է 49 մլն 350 հազար դրամի հիպոթեք, որից տարեվերջին մնացել է 43 մլն 896 հազար 536 դրամը: Տարեվերջին նա ունեցել է 27 հազար դոլար եւ 10 մլն դրամ բանկային ավանդ, 4 մլն 738 հազար 197 դրամ բանկային հաշվի մնացորդ: Նա Կատարի պետության «Քաթարա» մշակութային գյուղակ հիմնադրամից 1 մլն 844 հազար 321 դրամի բնամթերային ձեւով ստացված եկամուտ է հայտարարագրել: Տարվա ընթացքում նրա եկամուտները կազմել են 31 մլն 6 հազար 708 դրամ, որից 21 մլն 758 հազար 993 դրամը ստացել է «Իմ քայլը» հիմնադրամից՝ որպես աշխատավարձ, 3 մլն դրամ աշխատավարձ՝ «Դարեսկիզբ» ընկերությունից,.սա «Հայկական ժամանակը» հրատարակող ընկերությունն է, 4 մլն 123 հազար 592 դրամ՝ եկամտահարկի վերադարձից, իսկ մնացած գումարը գոյացել է ավանդների տոկոսագումարից:

Փաշինյանի ավագ դուստրը՝ Մարիամ Փաշինյանը, հայտարարագրել է «Նիսան» մակնիշի մեքենա, 2025-ի սեպտեմբերից նա Դիանա Աշոտի Արզումանյանից ձեռք է բերել ընկերության բաժնետոմսեր, տարեվերջին իր հաշվին ունեցել է 194, 270 դրամ գումար, իսկ 196,813 դրամ էլ վարկ է վերցրել: Նրա եկամուտները կազմել են 1 մլն 352 հազար 224 դրամ, որը գոյացել է աշխատավարձից եւ նշված վարկից: Նա նաեւ «Իմ քայլը» հիմնադրամից 763 հազար դրամի բնամթերային ձեւով ստացված եկամուտ է հայտարարագրել:

Շուշան Փաշինյանը հայտարարագիրը ներկայացնելու պահին բանկային հաշվին ունեցել է 58 հազար 946 դրամ: Տարվա ընթացքում նրա եկամուտները կազմել են 462 հազար 333 դրամ, որը գոյացել է «Իլոնա անգլերենի կենտրոն» ընկերությունում ստացած աշխատավարձից: Աշոտ Փաշինյանը վերջին անգամ հայտարարագիր է ներկայացրել 2022-ին:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՊԱՐՈՆ ԱԼԻԵՎ, ՀԱՅԵՐՍ ՁԵՁ ՀՆԱԶԱՆԴ ԵՆՔ, ՉԱՐ ՊՈՒՏԻՆՆ Է ՄԵՁ ՁԵՐ ԴԵՄ ՍԱԴՐՈՒՄ

Հայաստանը գտնվում է արտաքին կառավարման տակ եւ կատարում է Ադրբեջանի պահանջները. դրա մասին հայտարարեց Նիկոլ Փաշինյանը խորհրդարանի ամբիոնից: Նա բացահայտեց Ադրբեջանի նախագահի խորհրդական Հիքմեթ Հաջիեւի այցի իրական նպատակը. Հաջիեւը Հայաստան էր եկել խորհրդարանական ընտրությունների արդյունքների վերաբերյալ բացատրություններ ստանալու համար: Ադրբեջանին ընտրության արդյունքները դուր չէին եկել, զայրացած Ալիեւը Հայաստան էր ուղարկել իր խորհրդականին, եւ Փաշինյանը խոստացել է, ավելի ճիշտ՝ պարտավորվել է սրբագրել այդ արդյունքները, դրանք համապատասխանեցնել Ադրբեջանի պահանջներին, այլապես սպառնալով պատերազմ սկսել եւ գուցե պատերազմով փոխել Փաշինյանին: «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը մանդատներից զրկելը, Ռոբերտ Քոչարյանին, Դավիթ Ղազինյանին եւ բազմաթիվ այլ պատգամավորի թեկնածուների անձեռնմխելիությունից զրկելը, նրանց նկատմամբ քրեական գործերի հարուցումը կատարվում է Ալիեւի անմիջական ցուցումով: Փաշինյանը պարզ բացատրեց, թե ինչից է դժգոհ մնացել Ալիեւը, եւ ինքն ինչ է խոստացել նրան, որպեսզի կարողանա զսպել նրա զայրույթը:

«Ինչն էր անհրաժեշտությունը, որ ընտրություններից 3 օր, 4 օր հետո, ասենք, էդ ձեւաչափով հանդիպում կազմակերպվի, որպեսզի մենք կառավարենք էդ սպառնալիքը: Մեր իրադրություններին պետք է արտաքին աչքով էլ նայենք, որովհետեւ արտաքին աշխարհում, եւ ոչ միայն Ադրբեջանում, կարող է հարց ծագել՝ մի րոպե, Հայաստանի Հանրապետությունում 500 հազար քաղաքացի կա, որ մտածում ա, որ պետք ա ծովից ծով Հայաստանը գնալ վերցնել կամ Ղարաբաղը հետ բերել, կամ պետք է գնալ Ղարաբաղ, կամ պետք ա վերանայել խաղաղության համաձայնագիրը: Հասկանում եք՝ եթե ընկալումը լինի էնպես, որ էդքան մարդ կա, դա շատ լրջորեն կսրի ռազմաքաղաքական իրավիճակը Հայաստանում»,- խորհրդարանի ամբիոնից ասում է Փաշինյանը: Ալիեւին անհանգստացրել է այն փաստը, որ Հայաստանի խորհրդարանական ընտրությունների արդյունքում ադրբեջանահպատակ իշխանությունը չի ստացել 98 տոկոս քվե, ավելին՝ անգամ կեղծված ընտրությունների պաշտոնական արդյունքով հայաստանցի ընտրողների մեծամասնությունը քվեարկել է ընդդեմ ադրբեջանահպատակեցման, առնվազն 500 հազար մարդ քվեարկել է հանուն Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության կողմնակից ուժերի: Ալիեւը, որ իրեն համարում է Փաշինյանի եւ, ընդհանրապես՝ Հայաստանի իշխանության վերադաս, մարդ է ուղարկել Հայաստան՝ բացատրություն պահանջելու, թե ինչ է սա նշանակում, ինչպես կարող էր Հայաստանում այդքան մարդ դեմ լինել ադրբեջանահպատակեցմանը, արդյոք սա բունտ է Ադրբեջանի դեմ, ադրբեջանական հպատակեցման մերժում է:

Փաշինյանը խորհրդարանում բացատրեց, թե ինչպես են իրենք հանգստացրել Հաջիեւին, բացատրել ստեղծված իրավիճակը, ինչպես են արդարացել. «Բայց մենք հո գիտենք իրողությունը, մենք հո գիտենք, որ չկա էդպիսի մարդ, այլ ընտրակաշառք ա բաժանվել՝ արտաքին ուժերի օգնությամբ, ովքեր շահագրգռված են, որ տարածաշրջանը պայթի, եւ, այո, ընտրակաշառքով կոնկրետ պատերազմի սպառնալիք են ստեղծել: Գրիգորյանի եւ Հաջիեւի հանդիպումը պատերազմի սպառնալիքը կառավարելու համար էր: Եվ շատ հետաքրքիր էր, էդպիսի արագությամբ հանդիպումներ շատ հազվադեպ են, համենայնդեպս, ես չեմ հիշում նախկինում, որ էդպիսի արագությամբ հանդիպում կազմակերպվի: Դա նշանակում է, որ երկու կողմում էլ էդ զգացողությունը կար, որ դավադրություն կա ստեղ, պետք է ռեակցիա տալ»:

Փաշինյանի ասածն այն է, որ հայաստանյան հասարակությունը ոչ թե իր կամքով է ըմբոստացել Ադրբեջանի դեմ, այլ ինչ-որ արտաքին ուժեր, ենթադրաբար՝ Ռուսաստանն է հրահրել այդ ըմբոստությունը, չար Պուտինը, որն ուզում է պատերազմ հրահրել: Ալիեւն էլ ասել է, որ եթե դա իսկապես այդպես է, ապա Փաշինյանը պետք է խմբագրի ընտրության արդյունքները, դրանք համապատասխանեցնի իր պահանջներին, ինչին հեզաճկուն Փաշինյանը համաձայնել է: Առաջին քայլը եղավ «Բարգավաճ Հայաստան» խմբակցությանը հինգ մանդատներից զրկելը, հաջորդ քայլով Փաշինյանը հայտարարեց, որ խորհրդարան անցած «Ուժեղ Հայաստան» եւ «Հայաստան» դաշինքները ձայներ են ստացել ընտրակաշառքով եւ կեղծիքով, եւ բազմաթիվ քրեական գործեր սարքվեցին այդ դաշինքների համամասնական ցուցակների անդամների նկատմամբ, հնարավոր է, որ այդ դաշինքները եւս զրկվեն մանդատներից: Ամեն ինչ կախված է, թե ինչ կպահանջի Ադրբեջանը, ինչքանով բավարարված կլինի ընտրությունների արդյունքներից: Փաստացի, Հակակոռուպցիոն կոմիտեն, Քննչական կոմիտեն, ԱԱԾ-ն, դատախազությունը եւ մյուսները հիմա աշխատում են ադրբեջանական պետպատվերի շրջանակներում:

Երբ Փաշինյանն իրեն ճղելով պահանջում է, որ ընդդիմությունը հեղափոխություն անի, դա ընդամենը մի բան է նշանակում. նա ասում է՝ այո, ես պատանդ եմ, պատանդ եմ Ադրբեջանի եւ Թուրքիայի ձեռքին, լինելով պատանդ, ես պարտավորություն ունեմ՝ կատարելու նրանց ներկայացրած պահանջները, եթե դուք դեմ եք դրան, ապա ազգային-ազատագրական պայքար սկսեք եւ Հայաստանն ազատագրեք պատանդի կարգավիճակից: Եթե պայքար չեք սկսում, եթե պատրաստ չեք Հայաստանն ազատագրել, ուրեմն մի բողոքեք, որ ես կատարում եմ նրանց պահանջները: Կարծում եմ՝ ամեն ինչ արդար է:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՓԱՇԻՆՅԱՆԻՆ ՀԱՆԳԻՍՏ Է ՊԵՏՔ

Հնձ թվում է՝ մեր երկրակյաց վարչապետի ինչ-որ տեղն այրվում է: Մի տեսակ հանգիստ չէ, խլշկոտում է, աչքերը ոլորում, ձեռքերն անկանոն շարժում… Ու սենց տակից որ չի նայում… Ձայնն էլ է փոխվել՝ առաջվա միալար ճղճղոցը չկա, խոսում է ելեւէջներով՝ «մինոր»-«մաժոր», «մինոր»-«մաժոր»: Ինչ է պատահել քեզ, մարդ Աստծո, երազիդ գել ու հարամի հո չեմ տեսել: Ընտրություն էր՝ եկավ, անց կացավ, մարդ հո չի՞ մեռել, որ քեզ այդպես կորցրել ես: Հաղթողին սազական չէ այդ ամենը: Եկել ես ԱԺ՝ քեզ հաղթողի պես պահիր, որ դահլիճում հավաքված ՔՊ-շնիկները գոնե հավատան հաղթանակիդ: Նմուշի համար մեկ հատիկ ընդդիմադիր պատգամավոր չկար դահլիճում, իսկ դու ընդդիմության ուղղությամբ այնքան վատ-վատ խոսքեր շռայլեցիր, որ էլ չասելու: Դատարկ օդը թրատում էիր, որ ի՞նչ… Կամ ինչի նման էր՝ եկար, ինքնապատասխանիչի պես պատասխանեցիր ՔՊ-ի ինքնահարցումներին, խայտառակեցիր քեզ էլ, ՔՊ-ին էլ, երկիրն էլ, պետությունն էլ, միջազգային գործընկերներիդ էլ… Ինչքան վատ խոսք ասացիր ընդդիմության ու նրա առաջնորդների մասին՝ հետ եկավ ուղիղ ճակատիդ: Թե բա՝ ընդդիմադիրները ընտրակաշառք են տվել: Բա սա հաղթողի ասելու բա՞ն է: Ավելի լավ, որ տվել են: Իրենց փողից է պակասել, բյուջեից հո չե՞ն վերցրել: Դու ավելի լավ է ասես, թե ՔՊ-ի 720 հազար քվեն ինչքանով եք առել, ում փողով, ինչ հանգամանքներում: Քո խաթեր համար 720 հազարից 220-ը կհանեմ: Դա ՔՊ-շնիկների եւ նրանց հետ փոխկապակցված մարդկանց օրգանիկ ձայնն է: Իսկ որտեղի՞ց քեզ մնացած 500 հազար ձայնը, եթե, ինչպես դու ես ասում, կողմնակի ընտրողները քվեարկել են բացառապես ընտրակաշառքով:

Էդ անտեր ԱԺ ամբիոնը հո բանման թափ տալու տեղ չի՞, վերջապես… Բռնելու եմ, նստացնելու եմ, կզացնելու եմ, թավիշը վերջացավ, եկել է ժողովրդի վրեժի ժամանակը… Դու քեզ հաշիվ տալի՞ս ես նման բաներ հայտարարելիս: Բավական չէ 44-օրյա պատերազմի ժամանակ «կռվել ես» Ադրբեջանի կողմից, 2020թ. նոյեմբերին հաղթել Հայաստանին ու հայ ժողովրդին, «կզացրած» պահել հայությանը, հաջողացրել 21 թվին վերընտրվել, հիմա էլ եկել՝ հաթաթա ես տալիս 500 հազար մարդու աջակցությունն ունեցող լիդերների՞ն: Որտե՞ղ ես նման բան տեսել, ումի՞ց ես սովորել… Դահլիճում հավաքված հավերն էլ բերանները բաց լսում են ու իրենց մեջ նեղվում՝ էս ինչե՞ր է խոսում մեծարգոն, ախր մենք հաղթել ենք, փոխանակ հաղթանակը շնորհավորի, ամբիոնից ուրիշ բան ա թափ տալիս:

Այն տպավորությունը, որ Նիկոլի «հաղթանակի» հետ կապված ստացել էի հունիսի 7-ի լույս 8-ի գիշերը, վարչապետ-ՔՊ հարցուպատասխանի ժամերին դույզն-ինչ չփոխվեց: Նա նույնությամբ ստում էր՝ ինչպես հետընտրական առաջին ասուլիսի ժամանակ: Ասեմ՝ դա ո՛չ հաղթողի ասուլիս էր, ո՛չ էլ ԱԺ-ում հաղթողի հարցուպատասխան: Նա պարզապես ստում էր: Ձեռքս կտրեմ, թե Հայաստանում ՔՊ-ն 720 հազար օրգանիկ քվե ունի: Առնվազն 500 հազարը կամ քշովի-բերովի է, կամ նկարովի: Վահագն Հովակիմյան, հոգի ունես Աստծուն տալու, ձեռքդ դիր խղճիդ ու ասա, թե քանի հարյուր հազար ձայն ես նկարել Նիկոլի համար: Այդկերպ դու մեզ կօգնես՝ պարզելու ՔՊ կաշառակեր ընտրողների իսկական թիվը: Մինչդեռ, երբ դու լռում ես, պարոն Հովակիմյան, Փաշինյանին թվում է, թե ինքը 720 հազար քվե ունի, երբ լռում են ՔՊ-շնիկ տասովշչիկները, Փաշինյանին թվում է, թե իր բոլոր ձայներն օրգանիկ են: Այս զգացողություններից նա դառնում է լրիվ անկառավարելի, գլխապտույտ է ունենում իր «տարած հաղթանակից», հարձակվում ընդդիմության վրա, սկսում վիճարկել ընդդիմության տարած 500 հազար քվեն, թե բա՝ կաշառել են, չի կարող Հայաստանում այսքան մարդ լինել, որ ուզենա Արցա… Ղարաբաղը հետ բերել:

ՀԳ. *Պարոն Փաշինյան, ես Ձեզ հետ առանձին խոսելիք ունեմ: Երկու օր առաջ, ուրեմն, Տիգրան Մեծի եւ Ալեք Մանուկյանի անկյունում հարմար պահ առաջացավ: Ոգում էի բացել մեքենայի դուռն ու միանալ ձեզ՝ ասելիքս ասելու: Ախրանկան չթողեց: Ինձ կարգադրեցին. «Բարձրացեք մայթ, քաղաքացի, շառից-փորձանքից հեռու…»: Այդ մարդիկ կյանքս փրկեցին, փաստորեն, բայց ասելիքս մնաց: Ժամանակ գտեք, խնդրում եմ, այս երկու օրը հանդիպենք, սուրճ խմենք, եւ ես Ձեզ պատմեմ մի պատմություն այն մասին, թե ինչպես են իրենց պահում ժողովրդավարական երկրների առաջնորդները նման իրավիճակներում: Գիտեմ, դա հաճելի չի լինի Ձեզ, բայց ի՞նչ արած, գոնե կիմանաք այդ մասին ու այս մեծ խայտառակությունից հետո Ձեզ այդպես չեք պահի:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՍՏՐՈՒԿՏՈՒՐԱՆ ՓՈԽԵԼ ԵՆ. ՆԱԽԱԳԱՀՆ ԱՎԻՆՅԱՆՆ Է, ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ՝ ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԸ

Հայաստանի համայնքների միության պատվիրակությունը հունիսի 22-26-ը կմասնակցի Մարոկկոյի Տանժեր քաղաքում անցկացվող «Միավորված քաղաքներ եւ տեղական իշխանություններ. Եվրասիա» կազմակերպության համաշխարհային կոնգրեսին, որն այս տարի անցկացվում է «Համընդհանուր տեղական հանրային ծառայությունների նոր սերունդը» խորագրի ներքո: Հայկական պատվիրակության կազմում են Հայաստանի համայնքների միության գլխավոր տնօրեն Արմեն Հարությունյանը եւ Վեդի համայնքի ղեկավար, հանրության մեջ «կոկորդիլոսագետ» անունով հայտնի Գարիկ Սարգսյանը:

«Միավորված քաղաքներ եւ տեղական իշխանություններ. Եվրասիա»-ն «Միավորված քաղաքներ եւ տեղական իշխանություններ» (UCLG) համաշխարհային կազմակերպության եվրասիական տարածաշրջանային մասնաճյուղն է: Համաշխարհային կազմակերպությունը միավորում է ավելի քան 240 հազար քաղաք, համայնք, մարզ եւ մետրոպոլիա՝ աշխարհի 140 երկրից՝ ներկայացնելով մոլորակի բնակչության ավելի քան 70 տոկոսի շահերը: Այն ճանաչված է ՄԱԿ-ի կողմից որպես տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների գլխավոր գործընկեր եւ կարեւոր դեր է ունեցել Կայուն զարգացման նպատակների շրջանակում «Կայուն քաղաքներ եւ բնակավայրեր» նպատակի ձեւավորման գործում: Տանժերում կայանալիք համաշխարհային կոնգրեսը հյուրընկալելու է ավելի քան 3 հազար տեղական եւ տարածաշրջանային առաջնորդների, քաղաքապետերի, նահանգապետերի, համայնքային խորհուրդների անդամների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների եւ միջազգային կազմակերպությունների գործընկերների: Կոնգրեսի շրջանակում տեղի կունենան Գլխավոր ասամբլեայի, Համաշխարհային խորհրդի եւ Գործադիր բյուրոյի նիստերը, որոնց ընթացքում կընդունվեն միջազգային համայնքային շարժման առաջիկա տարիների զարգացման հիմնական որոշումները:

Միջոցառման ժամանակ տարածաշրջանային կառույցները ներկայացնելու են իրենց առաջնահերթությունները, տեղական ինքնակառավարման ոլորտի լավագույն փորձը եւ նորարարական լուծումները: Մասնակիցները քննարկելու են համայնքների առջեւ ծառացած արդի մարտահրավերները, ինչպես նաեւ՝ ներկայացնելու են հաջողված նախաձեռնություններն ու զարգացման մոդելները: Այս ամենն ասված է պաշտոնական հաղորդագրության մեջ:

Համայնքների միությունն այն ժամանակ, երբ դրա նախագահն Էմին Երիցյանն էր, բավականին ակտիվ էր, զբաղվում էր տարբեր հարցերով, որոնք վերաբերում էին համայնքային կյանքին, երբեմն քննադատում էր համայնքների հետ կապված իշխանությունների քաղաքականությունը, մասնավորապես՝ համայնքների խոշորացման սկզբունքներն ու ձեւերը: Սակայն այն օրվանից, երբ ՔՊ-ական իշխանությունը նաեւ այս կառույցն իրենով արեց՝ փոփոխություններ կատարելով եւ մասնավորապես Էմին Երիցյանին այս պաշտոնից ազատելով, կառույցը, ըստ էության, ոչնչացավ:

Այժմ Համայնքների միությունը ղեկավարում է Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը: Միության նախկին նախագահ **Էմին Երիցյանից** «Հրապարակը» հարցրեց՝ այն ժամանակ միությունն ինչ հիմնական գործառույթ էր իրականացնում եւ ինչո՞վ է զբաղված հիմա: Երիցյանը մեզ հետ զրույցում ասաց. «Բոլոր ժամանակներում էլ միությունն ունի նույն գործառույթը, այն համայնքների ձայնն է, հանրության հետ, կառավարության հետ, արտաքին աշխարհում եւ ամենուր, ինչպես նաեւ՝ տարբեր հասարակական կազմակերպությունների հետ եւ այլն: Նպատակը պրոյեկտներն են, վերապատրաստումները, համայնքների օգտին աշխատանքներ կատարելը: Բոլոր երկրներում էլ նման կառույցներ կան և դրանք ունեն այդ հիմնական գործառույթները: Մենք կառուցվածքային փոփոխություններ կատարեցինք, այժմ վարչության նախագահը Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանն է: Ստրուկտուրան փոխել են, արդեն ոչ թե միության նախագահ է, այլ՝ վարչության նախագահ, «միության նախագահ» ասվածն այլեւս չկա»:

Երիցյանին նաեւ հարցրինք՝ ինչո՞ւ է Տանժեր քաղաքում ելույթով հանդես գալու Վեդիի կոկորդիլոսագետ համայնքի ղեկավարը, ինչ կապ ունի նա այս կառույցի հետ, առհասարակ՝ ինչ է նա արել կառույցի համար: «Կառույցը տարբեր միջազգային ասոցիացիաների անդամ է նաեւ: Եվրոպայի խորհրդում ունենք պատվիրակություն, էներգախնայողության ոլորտում ունենք մասնակցություն, եւ կա համաշխարհային ասոցիացիա: Ասոցիացիայի հիմնադրման օրվանից մենք ասոցիացիայի անդամ ենք: Այն գործում է ՄԱԿ-ի հովանու ներքո, այնտեղ մշտապես ունեցել ենք ներկայացուցիչ, նախորդ տարվա վարչության որոշմամբ Վեդիի քաղաքապետ Գարիկ Սարգսյանն է ներկայացնում ասոցիացիան: Ինչ վերաբերում է նրա՝ իշխանական լինելուն, ես չեմ կարող այդ հարցին պատասխանել, վարչությունն ինչպես որոշում է, այդպես էլ անում են: Հիմա ստրուկտուրան այլ է: Ի դեպ, ես այժմ լրիվ այլ աշխատանքով եմ զբաղվում՝ մասնավոր բիզնեսով, եւ ոչ մի կապ չունեմ որեւէ պրոցեսի հետ»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Արցախի մշակույթն անտեր է մնացել

«Արցախի արվեստագործների միություն» ՀԿ-ն, որն անվճար ուսուցում է ապահովում շուրջ 200 երեխայի եւ կանանց համար, ֆինանսավորման խնդիր ունի: Կենտրոնը գործում է Երեւանի Արտաշիսյան 46 հասցեում եւ աշխատում է անվճար՝ բարեգործական հիմունքներով: ՀԿ-ի տնօրեն **Իրա Թամրազյանը** մեզ հետ զրույցում ասաց. «Մեր կառույցը գործել է նաեւ Արցախում, մինչեւ 2023-ը կոչվում էր Հադրութի ստեղծագործական կենտրոն, դրանից հետո մենք վերաբացվեցինք «Արցախի արվեստագործների միություն» ՀԿ անվամբ: Դասավանդողները կամավորական հիմունքներով են աշխատում. «Մինչեւ 2023-ը Արցախի կառավարությունը մեզ ֆինանսավորել է, ունեցել ենք աշխատավարձ, իսկ հիմա ֆինանսավորում չկա: Մեծ խմբերը, որ գալիս են մեզ մոտ, հարցնում են, թե ինչպես օգնեն, օրինակ՝ Ժողարվեստների թանգարանից առաջարկեցին ծրագիր անել Արցախի կանանց հետ, նյութերն իրենք առան, մեր վարպետին 3 ամիս աշխատավարձ տվեցին, գոնե վարպետը 3 ամիս իր ընտանիքը կկարողանա պահել, իսկ մենք ընդհանրապես անվճար ենք անում էդ ամեն ինչը: Մենք պետական որեւէ ֆինանսավորում չունենք: Հիմա մեզ ժամանակ առ ժամանակ օգնում է Թեքեյան կենտրոնը, որ մի բան է լինում, խնդրում ենք՝ իրենք օգնեն: Հիմա այս ամիս տարածքի վարձը տալու հնարավորություն էլի չունենք, պիտի զանգեմ խնդրեմ, տեսնեմ՝ ով կարող է մեզ օգնել: Եթե այսպես շարունակվի, ես ինչքա՞ն կարող եմ մարդկանց խնդրել, որ օգնեք՝ տարածքի վարձակալության գումարը տանք, դե, աշխատավարձը հնարավոր չէ»:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՀՀ ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Մաս առաջին
Շարունակելի

Արմեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՎԱՐԿԻ ԲԱՐՁՐ ԱՐԺԵՔԸ ՄԻԱՅՆ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԽՆԴԻՐԸ ՉԷ

Օրերս հրապարակված ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի՝ բարձր վարկային տոկոսադրույքների վերաբերյալ մեկնաբանություններն ակամայից հիշեցրին երկրի գործադիր իշխանության ղեկավարի՝ արդեն թեւավոր խոսք դարձած այն արտահայտությունը, թե Հայաստանի քաղաքացիների աղքատությունը նրանց գլխում է: Կարծես նման տրամաբանությամբ էլ ԿԲ նախագահը վարկերի բարձր արժեքը բացատրում է ոչ այնքան երկրի համակարգային խնդիրներով, որքան ձեռնարկատերերի վարքագծով եւ միջազգային տնտեսական միջավայրով:

Պրն Մարտին Գալստյանը մասնավորապես նշել է, որ բարեխիղճ ձեռնարկատերերը կարող են դրամային վարկեր ստանալ մոտ 11 տոկոսով, մինչդեռ պակաս հուսալի վարկառուները՝ մինչեւ 19 տոկոսով: Բացի այդ, ԿԲ նախագահը բարձր տոկոսադրույքների խնդիրը կապում է նաեւ աշխարհում տոկոսադրույքների աճի ընդհանուր միտման հետ:

Այս բացատրությունն անհիմն չէ: Տոկոսադրույքն իսկապես ներառում է ներգրավված միջոցների արժեքը, վարկային ռիսկի հավելավճարը, գնաճային սպասումները, արժութային ռիսկերը, գրավի որակը, վարկառուի դեֆոլտի հավանականությունը եւ պարտքի վերադարձման ինստիտուցիոնալ արդյունավետությունը: Այդ իմաստով տարբեր վարկառուների համար տարբեր տոկոսադրույքների կիրառումը տեղին է: Սակայն հիմնախնդիրն այլ տեղում է. ինչո՞ւ է Հայաստանի ֆինանսական համակարգն ինքնին վերարտադրում կապիտալի բարձր արժեք:

Եթե արագ շրջանառություն ունեցող առեւտրային գործունեության համար 11-19 տոկոս տոկոսադրույքը որոշ դեպքերում կարող է ընդունելի լինել, ապա արտադրության, արտահանման, տեխնոլոգիական արդիականացման, գյուղատնտեսության կամ երկարաժամկետ ներդրումային ծրագրերի համար այն սահմանափակում է կայուն տնտեսական զարգացման հեռանկարը: Բարձր տոկոսադրույքն այդպիսի նախագծերի համար դառնում է աճը զսպող գործոն:

Իհարկե, պետությունը որոշ դեպքերում բյուջեի միջոցով սուբսիդավորում է բարձր տոկոսադրույքները՝ թեթեւացնելով բիզնեսի բեռը: Սակայն դա «երկնային մանանա» չէ եւ չի կարող դիտարկվել որպես խնդրի հիմնարար լուծում: Բյուջետային միջոցները սահմանափակ են, եւ վարկերի սուբսիդավորումն իրականացվում է այլ հանրային կարիքների՝ կրթության, առողջապահության, ենթակառուցվածքների կամ սոցիալական ծրագրերի հաշվին: Այսինքն՝ բարձր տոկոսադրույքը, անգամ սուբսիդավորման պարագայում, չի անհետանում. այն ծանրանում է հարկատուների ուսերին եւ արտահայտվում պետական բյուջեի ծախսերի կառուցվածքի փոփոխությամբ:

Այստեղից՝ հետեւություն. վարկը չպետք է դիտարկվի միայն որպես բանկային ծառայություն: Այն սոցիալ-տնտեսական զարգացման առանցքային գործիք է: Եթե դրամավարկային եւ ֆինանսական համակարգը չի խթանում տնտեսության երկարաժամկետ զարգացումը եւ չի նպաստում հանրային եկամուտների կայուն աճին, ապա խնդիրը պայմանավորված չէ վարկառուների որակով:

Այս համատեքստում տեղին է հիշել Թինբերգենի կանոնը. եթե տնտեսական քաղաքականության համակարգը հետապնդում է մի քանի անկախ թիրախներ, ապա անհրաժեշտ են առնվազն նույնքան անկախ գործիքներ: ԿԲ-ն, որպես դրամավարկային քաղաքականության պատասխանատու մարմին, կարող է արդյունավետորեն հետապնդել գների կայունության նպատակը: Սակայն վարկերի հասանելիությունը, ներդրումների խթանումը եւ կապիտալի բարձր արժեքի նվազեցումը պահանջում են շատ ավելի լայն գործիքակազմ՝ արդյունավետ ֆիսկալ քաղաքականություն, պետական պարտքի կառավարում, ֆինանսական շուկա, դատաիրավական համակարգ եւ մրցակցային բանկային միջավայր:

Այլ կերպ ասած՝ եթե խնդիրը համակարգային է, ապա դրա լուծումը չի կարող երաշխավորվել միայն դրամավարկային քաղաքականությամբ: Այն պետք է լինի ինստիտուցիոնալ, ֆիսկալ եւ տնտեսական քաղաքականությունների արդյունավետ համադրման արդյունք:

Չհայը ջանք չի խնայել՝ կեղծելու ընտրությունները

Ընտրությունների արդյունքների վերաբերյալ զրուցեցինք շոու-բիզնեսի ներկայացուցիչների հետ: Երգչուհի **Ալլա Լեւոնյանը** հարցրեց՝ իր գնահատականը հիմա ինչ-որ բան է փոխելու: «Ես հիմա չեմ էլ ուզում որեւէ բան խոսել, ամեն ինչ ասված է իմ վերաբերմունքով էլ: Պարզ չէ՞, որ վատ»: Ընդդիմության՝ մանդատները վերցնել-չվերցնելու վերաբերյալ էլ պատասխանեց. «Ես չեմ հասկանում, դա մի տեսակ քաղաքական է, բայց ինչ էլ որոշի ընդդիմությունը, ես համարում եմ, որ ճիշտ է»: Երգչուհի Ռուզան Ավետիքյանը ընտրությունների վերաբերյալ չցանկացավ որեւէ մեկնաբանություն տալ: Երգչուհի Շուշան Պետրոսյանը մեր հարցին հարցով պատասխանեց. «Ես էլ Ձեզ եմ հարցնում՝ արդա՞ր է անցել»: «Ձեր կարծիքն էր մեզ հետաքրքրում՝ որպես ժամանակին ակտիվ քաղաքական գործչի»: «Ես միշտ ակտիվ հայրենակիցն եմ մի երկրի, որը Հայաստանն է: «Քաղաքական ակտիվ գործիչ» հասկացություն չկա, կա սրտացավ հայ: Սա հայի եւ չհայի կռիվ է: Բնականաբար, չհայը ջանք չի խնայել՝ կեղծելու ընտրությունները»: Իսկ ընդդիմության՝ մանդատներ վերցնել-չվերցնելու հարցի հետ կապված՝ երգչուհին նշեց, որ չպետք է վերցնել:

Դերասանուհի **Զուլիետա Ստեփանյանը** կարծում է, որ բավականին նորմալ են անցել ընտրությունները, եւ ինքը կեղծիքին չի հավատում: Այլ հարցերի նա չպատասխանեց՝ պատճառաբանելով, թե շտապում է ներկայացման փորձի: Մենք կապվեցինք ԱՄՆ-ում բնակվող դերասանուհի **Գայանե Ասլամազյանի** հետ, որն իր էջում ակտիվորեն անդրադառնում է երկրում տեղի ունեցող իրադարձություններին: «Առանձնապես ասելիք չունեմ, ոչ էլ մասնագիտական գիտելիք այս առումով, որ իմանամ, թե որն է ճիշտը: Իսկ Նիկոլի՝ ամեն գնով գալ աթոռին պլանի իրականացումն էլ տեսնում ենք»,- ասաց նա:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՌԱԿՏՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ ԵՐԿՐԻ ՎԱՐՉԱՊԵՏՆ Է

*Զրուցակիցս գրող, հրապարակախոս, ՅՈՒՆԵՍԿՕ-ի կատարողական արվեստների միջազգային ակադեմիայի պատվավոր անդամ **Աշոտ Դալլաբյանն** է:*

- Ընտրություններից հետո լայն քննարկման առարկա է դարձել Նիկոլ Փաշինյանի մի հայտարարությունը՝ «այն մարդիկ, ովքեր ընտրակաշառք են վերցրել եւ քվեարկել ըստ ընտրակաշառքի, կոնկրետ պատերազմի սպառնալիք են ստեղծել»: Ինչպե՞ս եք գնահատում այդ հայտարարությունը:

- Ընտրակաշառքը, անկասկած, ժողովրդավարական համակարգի ամենավտանգավոր երեւույթներից է: Այն խաթարում է ընտրողի ազատ կամարտահայտությունը, վնասում պետական ինստիտուտների լեգիտիմությանը եւ աղավաղում քաղաքական գործընթացները: Այդ առումով ընտրակաշառքի դատապարտումը բնական եւ անհրաժեշտ է: Անհանդուրժելի է, երբ հասարակության որոշակի հատվածի քաղաքական վարքագիծը կամ ընտրությունը ներկայացվում է որպես ազգային անվտանգության սպառնալիք: Ժողովրդավարության հիմքում ազատ ընտրության իրավունքն է, նույնիսկ եթե այդ ընտրությունը դուր չի գալիս իշխանությանը: Հետեւաբար, նման ընդհանրացումները ոչ միայն վիճահարույց են, այլեւ կարող են խորացնել հասարակական բաժանարար գծերը:

- Ձեր կարծիքով, նման ձեւակերպումներն ինչ ազդեցություն են ունենում հասարակության վրա:

- Հայաստանում առանց այդ էլ տեսանելի է հասարակական լուրջ բեւեռացում: Եթե խոսում ենք հարյուր հազարավոր քաղաքացիների մասին, որոնք չեն կիսում գործող իշխանության քաղաքական գիծը, ապա նրանց կարծիքը չի կարող ներկայացվել որպես երկրորդական կամ անտեսվել: Ժողովրդավարական պետությունում իշխանության պարտականությունն է՝ լսել նաեւ քննադատող քաղաքացիներին: Քաղաքական անհամաձայնությունը չի կարող ներկայացվել որպես պետական խնդիրների հիմնական պատճառ: Ընդհակառակը՝ բազմակարծությունն է առողջ ժողովրդավարության հիմքը: Պետության կայունությունը պայմանավորված է ոչ թե մարդկանց «ճիշտ» եւ «սխալ» խմբերի բաժանելով, այլ այնպիսի միջավայր ստեղծելով, որտեղ յուրաքանչյուր քաղաքացի, անկախ իր քաղաքական հայացքներից, իրեն զգում է երկրի լիիրավ տերը եւ պատասխանատուն:

- Հաճախ շեշտում եք, որ ժողովրդավարությունը միայն ընտրությունների արդյունքը չէ: Ի՞նչ նկատի ունեք:

- Ցանկացած իշխանություն, նույնիսկ ընտրություններում հաղթած, պարտավոր է ներկայացնել ոչ միայն իր ընտրողներին, այլեւ ամբողջ հասարակությանը: Ընտրական հաղթանակը չի նշանակում, որ հասարակության բոլոր շերտերը համաձայն են իշխանության վարած քաղաքականության հետ: Ժողովրդավարությունը միայն քվեարկության արդյունք չէ: Այն նաեւ քաղաքական մրցակցության, բազմակարծության, անհամաձայնության եւ տարբեր տեսակետների համակեցության մշակույթ է: Պետական գործչի ուժը չափվում է ոչ միայն իրեն աջակցողների, այլ նաեւ իրեն քննադատողների ձայնը լսելու կարողությամբ:

- Իսկ ո՞վ է պատասխանատու ներքաղաքական ներկայիս մթնոլորտի համար:

- Եթե այսօր Հայաստանը շարունակում է ապրել հասարակական բեւեռացման, փոխադարձ անվստահության եւ ներքաղաքական ճգնաժամի պայմաններում, ապա այդ պատասխանատվության զգալի բաժինն ընկնում է գործող իշխանությանը, որը ղեկավարում է երկիրը 2018-ից: Իշխանության գլխավոր առաքելությունը հասարակությունը միավորելն է, ոչ թե բաժանելը: Երբ քաղաքական հռետորաբանության մեջ գերակշռում են մեղադրանքները, պիտակավորումները եւ հասարակության տարբեր խմբերի միջեւ հակադրությունները, դա չի նպաստում համազգային համերաշխությանը:

Երկրում պահպանվում է աղքատության բարձր մակարդակը, հասարակության լայն շրջանակներում առկա է սոցիալական դժգոհություն, քաղաքական համակարգում նկատվում են կառավարման այնպիսի միտումներ, որոնք լուրջ հարցեր են առաջացնում ժողովրդավարական զարգացման տեսանկյունից: Բացի այդ, հասարակության մի հատվածի մոտ ձեւավորվել է անվստահություն իշխանության քաղաքական քայլերի նկատմամբ, ինչը եւս չի կարելի անտեսել:

- Ո՞րն է Ձեր հիմնական ուղերձն իշխանություններին:

- Դրսեւորել քաղաքական հասունություն, ընդունել սեփական սխալներն ու թերությունները եւ սկսել իրական երկխոսություն հասարակության հետ: Ժողովրդավարության ամրությունը որոշվում է ոչ միայն ընտրություններում ստացած ձայներով, այլեւ տարբեր կարծիքներ ունեցող քաղաքացիներին մեկ պետական օրակարգի շուրջ համախմբելու կարողությամբ: Ուզում եմ հացեական խոսել. այսօր հայ ժողովրդի պառակտման գլխավոր պատասխանատուն հենց երկրի վարչապետն է: Եվ դա ոչ թե պատահականություն է, այլ նրա քաղաքական թուլության եւ վարած քաղաքականության տրամաբանական հետեւանքը: Պարոն Փաշինյան, լավ կլինի, որ Ձեր ելույթներում խոսեք ոչ թե հորինված մեղավորների, այլ իրական խնդիրների մասին. Հայաստանում կա 1 միլիոն աղքատ մարդ: Երկրում պահպանվում են մենաշնորհներ: Քաղաքական համակարգում առկա են դիկտատորական միտումներ: Միապետական կառավարման տրամաբանությամբ արտոնություններ եւ թողտվություններ են տրվում համախոհներին: Համառությամբ շարունակվում են այն ավանդույթները, որոնք սկիզբ են առել դեռեւս նախորդ իշխանությունների կառավարման տարիներին, եւ որոնք այսօր մեծ պատրաստակամությամբ ու նույն ոգով շարունակում եք դուք: Հասարակության մի զգալի հատվածի մոտ խորացած է այն համոզմունքը, որ Ձեր քաղաքական քայլերի մի մասը համընկնում է Ադրբեջանի նախագահ Ալիեւի շահերի եւ պահանջների հետ: Դրսեւորեք քաղաքական հասունություն եւ գիտակցություն, ընդունեք Ձեր եւ Ձեր թիմի սխալներն ու թերությունները:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ՍԱՐԴ-ՄԱՐԴԸ. ԻՆՉՊԵՍ Է ԱՌԱՋԱՑԵԼ ԱՄԵՆԱՀԱՅՏՆԻ ԿԵՐՊԱՐՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Սարդ-մարդը ամենահայտնի սուպերհերոսներից է՝ համաշխարհային փոփ-մշակույթի մեջ: Այն գոյություն ունի ավելի քան վեց տասնամյակ, եւ այդ կերպարն այս ընթացքում կոմիքսների հերոսից դարձել է գլոբալ մշակութային ֆենոմեն, որը միավորում է ընթերցողների սերունդների, հեռուստադիտողների եւ երկրպագուների, մի խոսքով՝ աշխարհի միլիոնավոր մարդկանց: Սարդ-մարդու կերպարը հետաքրքիր է ոչ միայն իր գերբնական կարողությունների շնորհիվ, այլ նաեւ այն բանի, որ կերպարն ունի մարդկային խորը գծեր, ինչի շնորհիվ էլ արագորեն հարազատ դարձավ միլիոնավորների համար:

Կերպարը ստեղծվել է գրող Սթեյն Լիի եւ նկարիչ Սթիվ Դիթքոյի կողմից: Առաջին անգամ Սարդ-մարդը հանդես է եկել 1962 թվականին՝ Amazing Fantasy #15 կոմիքսում: 60-ականների սկզբներին սուպերհերոսների մեծ մասը հասուն կերպարներ էին, որոնք ինքնավստահ էին՝ լի քաջագործություններ անելու կամքով ու վճռականությամբ: Սարդ-մարդու հեղինակները որոշում են կոտրել այս ավանդույթը եւ իրենց սուպերհերոս են դարձնում սովորական դեռահասի, որը բախվում է ամենասովորական կենցաղային խնդիրների հետ՝ կապված ուսման, ֆինանսական դժվարությունների, հասարակությունում իր տեղի ու դերի որոնումների հետ: Այս պատմության գլխավոր հերոսը Պիտեր Պարկերն է՝ որբուկ, որը դաստիարակվել է ազգականների՝ Բենի եւ Մեյի կողմից: Գիտափորձի ժամանակ Պիտերին կծում է ռադիոակտիվ սարդը, եւ նա ստանում է անսովոր կարողություններ՝ գերմարդկային ուժ, մակերեսներին կպչելու հատկություն, բարձր արագություն եւ շարժունակություն, «սարդի հոտառություն»: Սկզբում Պիտերն իր կարողություններն օգտագործում է անձնական օգուտների համար: Սակայն հետո, երբ հանցագործը, որին կարող էր կանգնեցնել, սպանում է քեռի Բենին, հերոսի կյանքն արմատապես փոխվում է: Այդ ժամանակ էլ նա կյանքի գլխավոր դասն է քաղում՝ «մեծ ուժի հետ գալիս է մեծ պատասխանատվությունը»: Սա էլ դառնում է Սարդ-մարդու գլխավոր կենսափիլիսոփայությունը: Ի տարբերություն այլ սուպերհերոսների, Պիտեր Պարկերն անընդհատ զարգանում է: Ընթերցողները տեսնում են, թե ինչպես է նա հասունանում, ավարտում դպրոցը, ընդունվում համալսարան, գիտնականի եւ լրագրողի կարիերա կառուցում, ընկերներ ձեռք բերում, անձնական ողբերգություններ ունենում: Կերպարն այս ամենի շնորհիվ միշտ մնում է ակտուալ եւ սպասված:



Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱԽԻՐԸ ՑՆԾՈՒՄ Է, ՕՏԱՐ ՆԱԽՐՉԻՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՓՈՐՁՆ ԵՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ

Քարուքառա տափարակում նախրապանի ընտրություն էր տեղի ունենում: Նախրի առանձնյակները հատուկ ոգեւորությամբ ընտրեցին հին Գերագույնին: Տապից խանձված խոտը ծամեցին ու առանց խղճի խայթի իրենց որոճածը քվեատուփի մեջ լցրին: Իրար մեջ նախապես տվելառել էին. «Եթե գելը մեզ ուտելու է, լավ է՝ մեր տեսած գելն ուտի»: Վերջին քվեն դեռ օդում էր, Գերագույնը բաժակ բարձրացրեց ու ինքն իրեն հաղթանակ շնորհեց: Տափարակների նախրչիներն անմիջապես միացան ուղերձներով: Քարուքառա տափարակի ծայրերից էլ նամակների հոսք սկսվեց՝ ուղղված նախրապանին:

Նամակ 1. «Մենք հոծախումբ ընտրողներ ենք: Չգիտենք ինչու՝ մեզ ավանակ են ասում: Մենք չենք նեղվում՝ ավանակներն էլ են Աստծո ստեղծած էակներ: Ճիշտ է՝ տափարակի խոտն անտերությունից կծղած է, բայց մենք հավատում ենք Ձեր ճղճղոցներին, թե խաղաղություն է, հյութեղ խոտ ու սառնորակ ջուր: Դեմ չենք՝ թող հարեւան նախիրները ներխուժեն մեր արոտավայրեր: Էշն էլ սատկի, իշատերն էլ, բայց խաղաղ լինի: Մեզ հանդ տարեք»:

Նամակ 2. «Մենք ազատամարտիկ գոմեշներ ենք: Կռվել ենք մեր հանդամասեր խուժած նախիրների դեմ: Դուք վերջերս ասացիք՝ իզուր եք կռվել: Ճիշտ եք՝ մեր հանդերը մեր շլնքին թոկ են: Վերջապես ազատվել ենք: Շնորհակալ ենք: Միայն մի խնդրանք. թշնամուն չասեք, որ իրենց դեմ կռվել ենք: Թող գան, մեզ հետ հավասար արածեն, բայց չիմանան, որ առաջ իրենց դեմ ենք եղել»:

Նամակ 3. «Իմ երկու հորթուկներին ես կորցրի վերջին պատերազմում: Շնորհակալ եմ՝ ընդունեցիք մատաղացու: Քեզ ընտրել եմ իմ չորս ոտքով, սմքած պտուկներով: Շնորհակալ եմ, որ նրանց ոսկորները գերեզման ունեցան: Շորհավորում եմ հաղթանակի համար ու գնամ՝ խոտս ծամեմ»:

Նամակ 4. «Սահմանամերձ ուրթի բնակիչ այծ եմ: Արդեն քանի տարի է՝ մեր հանդի գլխին թշնամու ցլիկներն են հերթապահում: Մի ժամանակ ահուդողի մեջ էինք: Բայց խաղաղության մասին Ձեր ճառը հուսադրեց: Ամբողջ ուրթով Ձեզ ընտրեցինք: Մեզ էլ արոտի տարեք: Ցլիկները մեր թշնամին չեն»:

Նամակ 5. «Հարյուրավոր տարիներ ասում էին, թե մեր նախնիներին մորթել են: Ասում եք՝ սուտ է: Մենք հավատում ենք: Խաղաղություն է պետք: Կեցցե արոտը»:

Նամակ 6. «Քաղաքական այլ նախրից էի: Տեսա՝ քամին Ձեր կողմն է փչում, հասկացա, որ միշտ էլ հոգով Ձեր կողմում եմ եղել: Ինձ նոր նախրի հնագույն անդամ համարեք, խնդրում եմ: Հաճույքով Ձեր առաջնորդությամբ արոտ կգամ»:

Նամակ 7. «Տարբեր նախրչիների եմ ծառայել: Հիմա էլ Ձեզ եմ ծառայում: Անհրաժեշտության դեպքում կվկայեմ, որ մեր նախիրը երբեք հանդ չի ունեցել: Պետք է՝ կվկայեմ, որ խոտ էլ չի ունեցել: Միայն ինձ արոտից հեռու չպահեք»:

Նամակ 8. «Հեռուստաուրթի մեկնաբան եմ: Ամեն երեկո բացատրում եմ՝ չոր խոտը սննդարար է, քան՝ կանաչը: Եթե որեւէ առանձնյակ դժգոհում է, ապացուցում եմ, որ նրա ատամներն են փչացած: Խոստանում եմ ավելի համոզիչ որոճալ Ձեր առաջնորդած նախրում»:

Նամակ 9. «Ես սոցցանցային մարտիկ սագիկ եմ: Արոտ չեմ տեսել, բայց ամեն օր ապացուցվում է, որ Ձեր բերած արոտն աշխարհի լավագույն արոտն է: Ով հակառակն ասի՝ գելի գործակալ է: Ինձ պաշտոնական որոճացող նշանակեք»:

Նամակ 10. «Ես ճանաչված առանձնյակ եմ՝ ուսյալ հնդուհավ: Գրքեր եմ որոճացել ու հին արոտների մասին դասավանդել: Վերջերս հասկացա՝ ամեն ինչ հարաբերական է: Եթե Դուք ասում եք, որ չոր խոտը կանաչ է՝ կանաչ է: Եթե ասում եք, որ կորցրած հանդը մերը չի եղել, ուրեմն չի եղել: Մտավորականի պարտքն է՝ քայլել ժամանակի հետ, ոչ թե քարշ գալ ճշմարտության ետեւից: Կբացատրեմ բոլորին՝ ինչու են իրենք երջանիկ: Ինձ էլ արոտ տարեք»:

Եկան նաեւ օտար նախրչիների սպասված շնորհավորանքները:

Հարեւան տափարակի նախրչուց. «Շնորհավոր վերստացած մանդատի առթիվ: Գնահատում ենք մեր նախիրների միջեւ ցանկապատները վերացնելու Ձեր ջանքերը: Մեր ցլիկներն անհամբեր սպասում են նոր արոտավայրերի բացմանը»:

Հեռավոր տափարակի նախրչուց. «Ձեր նախիրը բացառիկ երեւույթ է: Մեզ մոտ առանձնյակները երբեմն դժգոհում են խոտի պակասից: Իսկ ձերոնք խոտ չունենալով՝ շարունակում են ծափահարել: Ուսումնասիրում ենք ձեր հրաշալի փորձը»:

Գայլերի միջազգային միությունից. «Ձեր հաղթանակը մեծ խթան է մեր ոլորտի զարգացման համար: Նախիրների ինքնակամ մոտեցումը գայլանոցներին պատմական նվաճում է: Ձեր փորձն ուսումնասիրվում է բազմաթիվ գելանոցներում»:

Նախրապանը նամակները չկարդաց: Գիտեր՝ բոլորը հերթով բացատրում են, թե ինչու են արժանի նախրում մնալ: Չոմբախը ուսն առավ, քայլեց՝ նախիրը հետեւեց: Առջեւում արոտ էր, թե սպանդանոց՝ անհայտ էր: Վստահ էին՝ գնում են դեպի խաղաղություն:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 19.06.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ 2 «ՔԱՂԱՔԱԿԱՆ ՌԵՎԵՐԱՆՍ» ԱՐԵՑ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը երեկ երկու հայտարարություն է արել, որոնք գոնե ինձ համար ուշագրավ են: Նախ՝ կառավարության նիստում հայտարարել է, որ անորակ ապրանք չպետք է արտահանել ինքնիշխանության հաշվին: Նա դա համարել է անտրամաբանական եւ մերժելի: Ասել է, որ ստանդարտներին համապատասխանող ապրանք արտադրողներին պետությունը շարունակելու է աջակցել, իսկ չհամապատասխանողին՝ ոչ: Մյուս հայտարարությունն արել է լրագրողների հետ հարցուպատասխանի ժամանակ՝ ասելով, որ առաջիկայում ԵԱՏՄ միջկառավարական հանձնաժողովի նիստ կա նախատեսված, եւ ինքը նախատեսում է դրանց մասնակցել: Խոսքը 2026-ի օգոստոսի 15-ին Ղրղզստանի Չոլպոն-Աթա քաղաքում կայանալիք ԵԱՏՄ միջկառավարական հանձնաժողովի նիստի մասին է: Անկախ այն հանգամանքից, թե ներհայաստանյան քաղաքական կամ հանրային քննարկումներում իշխանական կամ մերձիշխանական խոսափողներն ինչ որակի հակառուսական խրոխտ հայտարարություններ են հնչեցնում, ինձ համար կոնկրետ այս երկու հայտարարությունն ունի որոշակի պրոռուսական կոնտեքստ: Փորձեմ բացատրել, թե ինչու:

Ռուսաստանն այս պահին Հայաստանի տնտեսության համար բավականին ցավոտ ու զգալի սահմանափակումներ է կիրառել՝ օգտագործելով Հայաստանից Ռուսաստան արտահանվող ապրանքների որակական ստուգման հետ կապված անհամապատասխանությունները: Այլ կերպ ասած՝ Ռուսաստանը ոչ թե ուղիղ ասում է, թե գիտե՞ս, պաշտոնական Երեւան, դու Ձելենսկուն բերեցիր, հարթակ տրամադրեցիր, թույլ տվեցիր, որ մեր հասցեին «վայրահաչի», դե, դրա համար էլ հիմա մենք քո «այս, այս ու այս» ապրանքները թույլ չենք տա, որ ո՛չ մեզ արտահանես, ո՛չ էլ մեր տարածքով տրանզիտ անես: Այլ գտնում է որակական խնդիրներ, ընդունված ստանդարտներին անհամապատասխանություններ եւ արգելանքներ կիրառում: Ու հիմա, երբ Հայաստանի ղեկավարը կառավարության նիստում, այսինքն՝ իր պաշտոնական խոսույթում ասում է, թե ինքնիշխանության հաշվին անորակ ապրանք արտահանելն անտրամաբանական է, ապա ըստ էության ընդունում է, որ Ռուսաստանի կողմից լիազորված մարմնի՝ «Ռոսսելխոզնադզորի» կողմից հայկական արտադրանքում «հայտնաբերված» եւ արգելանքի համար ֆորմալ պատճառ դարձած խնդիրներն իրականում կան, ու խնդիրն այստեղ հայ արտադրողն է կամ հայ գյուղացին:

Իհարկե, Փաշինյանի խոսքում նաեւ կա ակնարկ, որ սահմանափակումները քաղաքական ենթատեքստ ունեն, եւ եթե, օրինակ, ինքը Ձելենսկուն հարթակ չտրամադրեր, ապա, առկա որակական խնդիրներով հանդերձ, հայկական արտադրանքը գուցեեւ շարունակեր անարգել մտնել ռուսական շուկա կամ տրանզիտ արվեր Ռուսաստանով: Սակայն դա, ըստ Փաշինյանի խոսքի տրամաբանության, կարող էր նշանակել ի գին ինքնիշխանության արվող արտահանում: Մյուս հայտարարությունը կապված է ԵԱՏՄ միջկառավարական հանձնաժողովի առաջիկա նիստի հետ: Ինչպես հայտնի է, 2026-ի օգոստոսի 15-ին Ղրղզստանի Չոլպոն-Աթա քաղաքում կայանալու է ԵԱՏՄ միջկառավարական հանձնաժողովի նիստ: Փաշինյանն արդեն հունիսի 18-ին հայտարարում է, որ մասնակցելու է այդ նիստին: Իհարկե, Հայաստանը, որպես ԵԱՏՄ անդամ երկիր, կարող է մասնակցել այդ նիստին: Սակայն կա մի նյուանս: Իմ կարծիքով, առնվազն մինչեւ այդ նիստի օրը Ռուսաստանը պետք է ճանաչի Հայաստանում տեղի ունեցած պառլամենտական ընտրությունները: Եթե չճանաչի, ապա անհասկանալի կլինի, թե Փաշինյանն ինչ կարգավիճակով է մասնակցելու այդ նիստին: Եթե Ռուսաստանը որոշի չճանաչել Հայաստանում տեղի ունեցած հունիսի 7-ի ընտրությունների արդյունքները, ապա այն պահից սկսած, երբ գործող ՀՀ ԱԺ լիազորությունների ժամկետը լրանա, եւ սկսի գործել նոր ԱԺ-ն, ձեւավորվել նոր գործադիր իշխանությունը Հայաստանում, ապա Ռուսաստանի համար այն չի համարվի օրինական: Փաշինյանն առայժմ Ռուսաստանի համար Հայաստանի լեգիտիմ վարչապետն է, որովհետեւ գործում է որպես 2021 թվականի ընտրություններով ձեւավորված խորհրդարանի կողմից ընտրված վարչապետ: Հենց այստեղ է հարցը, ու Փաշինյանի համար շատ կարեւոր է, որ Մոսկվան ճանաչի Հայաստանում հունիսի 7-ի ընտրությունները, որպեսզի նաեւ ինքն առաջիկա հինգ տարվա համար, որպես վարչապետ, Մոսկվայի կողմից ընկալվի որպես օրինական, լեգիտիմ ղեկավար:

Սերոբ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am